



**ԱՆՏԵՍԿԱԾ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ.
ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

2018-2021 թվականների **ԶԵԿՈՒՅՑ**


ԱՆՏԵՍՎԱԾ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ.
ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2018-2021 թվականների

ԶԵԿՈՒՅՑ

© Ընդդեմ կանանց սկստամաբ բռնության կոալիցիա

Երևան
2022



Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան



Ընդդեմ կանանց նկատմամբ
բռնության կոալիցիա
Coalition to stop violence
against women

Զեկույցում ներկայացված են կնասպանության՝ իբրև հղացքի ուսումնասիրությունն ու Հայաստանում 2018-2021 թվականների կնասպանության դեպքերի վերլուծությունը:

Սույն փաստաթղթի նպատակն է պետական համակարգին և լայն հանրությանը ծանոթացնել կնասպանություն երևույթին, պատճառներին, ինչպես նաև ներկայացնել կնասպանության և ընտանեկան բռնության միջև առկա կապը:

Զեկույցի շրջանակներում անդրադարձ է կատարվել 2018-2021 թվականներին սպանված կանանց պատմություններին՝ ներկայացնելով կնասպանության գործերով դատական ակտերը և օրենսդրական ու իրավակիրառ համակարգում առկա իրավական բացերը:

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:

Զեկույցից որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

**Ջեկույցը նվիրվում է կնասպանության հետևանքով
սպանված բոլոր կանանց և աղջիկներին**

Ջեկույցի հեղինակ՝

Ստելլա Չանդիրյան

Եվրոպական և միջազգային համեմատական իրավունքի
մասնագետ

Շապիկը և ձևավորումը՝

Լուսինե Դավթյանի

Բովանդակություն

Զեկույցի մասին	6
Հիմնական հասկացություններ	8
Ներածություն	12
Հետազոտության մեթոդաբանական հիմքերը	14
Կնասպանություն եզրույթն ու դրա կիրառման շրջանակը	22
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ԴԱՏԱՎՃՌՈՎ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԲԵՐ	28
ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԲԵՐ	48
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԲԵՐ	55
Ամփոփում	64
Քաղաքականության մշակման առաջարկներ	73
<i>Հավելված 1.</i>	
Քանակական հետազոտության արդյունքում բացահայտված ամփոփ տվյալներ	76
Գրականության ցանկ	78

Զեկույցի մասին

Սա երրորդ զեկույցն է, որ անդրադառնում է կնասպանության հիմնախնդրին Հայաստանում:

2016 թվականին Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի ջանքերով մշակվեց Հայաստանում կնասպանության վերաբերյալ առաջին զեկույցը, որն անդրադարձավ 2010-2015 թվականներին կանանց սպանություններին ներկա կամ նախկին զուգընկերների կողմից:

2018 թվականի երկրորդ զեկույցն անդրադառնում էր 2016-2017 թվականների կնասպանության դեպքերին, մասնավորապես՝ գործերի դատավարությանը և արդարադատության հասանելիությանը, ինչպես նաև կնասպանություն երևույթի համակարգային և խոր արմատացած պատճառներին:

Երրորդ զեկույցն անդրադառնում է 2018-2021 թվականների ընթացքում արձանագրված կնասպանության դեպքերին:

Զեկույցը բաղկացած է չորս հիմնական հատվածներից: Առաջին մասում անդրադարձ է կատարվում զեկույցի մշակման մեթոդական և մեթոդաբանական հիմքերին, մասնավորապես՝ հետազոտության նպատակին, խնդիրներին և տեղեկատվության հիմնական աղբյուրներին:

Երկրորդ հատվածում դիտարկվում են կնասպանություն երևույթի հայեցակարգային խնդիրները և ընդգրկման տիրույթը:

Զեկույցի երրորդ հատվածում ներկայացվում են 2018-2021 թվականների ընթացքում ՀՀ-ում արձանագրված և հասանելի կնասպանության դեպքերը: Դրանց վերլուծության միջոցով բարձրաձայնվում են այն կանանց պատմությունները, որոնց զրկել են սեփական կյանքից ուժի և իշխանության անհավասարության, արմատացած կարծրատիպերի և համընդհանուր թողտվության պատճառով:

Զեկույցի չորրորդ հատվածում ներկայացվում են լրատվամիջոցներով հրապարակված կնասպանության դեպքերը, որոնք հավաքագրել է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան:

Զեկույցն ամփոփվում է առաջարկներով, որոնք կօգնեն քաղաքականություն մշակողներին և լայն հանրությանն առավել հասցեական և թիրախային քայլերի միջոցով ազդեցություն ունենալ կնասպանության պատճառների վրա:

Հիմնական հասկացություններ

Գենդեր

Տարբեր սեռերի անձանց սոցիալապես ամրագրված վարք, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական պատկերացում (հայեցակետ), որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ ներառյալ քաղաքականության, տնտեսության, առողջապահության, գիտության, իրավունքի, մշակույթի ու կրթության:

Գենդերային խտրականություն

Գենդերային նախապաշարմունքների, կարծրատիպերի, սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

Գենդերային ուղղակի խտրականություն

Մեռային պատկանելությունն ուղղակիորեն մատնանշող խտրականություն:

Գենդերային անուղղակի խտրականություն

Խտրականություն՝ առանց սեռային պատկանելության ուղղակի մատնանշման:

Գենդերային հավասարություն

Ենթադրում է հավասար վերաբերմունքի և սեռով պայմանավորված խտրականությունից գերծ պայմանների և հնարավորությունների առկայություն հասարակությունում:

Գենդերային բռնություն

Բռնություն, որն առաջանում է գենդերային դերերից բխող ակնկալիքների և համապատասխան հարաբերություններում ուժի անհավասար բաշխման հետևանքով:

Ընտանեկան բռնություն

Ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական բռնության բոլոր դրսևորումներն ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ նախկին կամ ներկա ամուսինների կամ գուգրնկերների միջև՝ անկախ նրանից, թե կատարողը բնակվում կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում, թե ոչ:

Խտրականություն

Էապես նման իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքի դրսևորում, որը պայմանավորված է խտրականության արգելքի (պաշտպանված) հիմքերից որևէ մեկով (սեռ, գենդեր, տարիք, հավատ, առողջական վիճակ, հաշմանդամություն, գույքային դրություն և այլն)՝ առանց որևէ օբյեկտիվ պատճառի և ողջամիտ բացատրության:

Խտրականություն անուղղակի

Առերևույթ չեզոք օրենք, քաղաքականություն, պայման, գործողություն, չափանիշ կամ պրակտիկա, որոնց կիրառման դեպքում որոշ խմբերի իրավունքները սահմանափակվում են խտրականության արգելքի հիմքերից որևէ մեկով, և այլոց համեմատ նրանք հայտնվում են էապես անբարենպաստ վիճակում:

Խտրականություն ուղղակի

Որոշումներ, գործողություններ կամ անգործություն՝ ուղղված որոշակի հատկանիշներով անձի և (կամ) մի խումբ անձանց իրավունքների ու շահերի սահմանափակմանը, ցանկացած տարբերակմանը, բացառմանը կամ նախապատվությանը, որը նպատակաուղղված է կամ հանգեցնում է կյանքի տարբեր ոլորտներում անձանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

Կնասպանություն (Ֆեմիցիդ)

Կանանց և աղջիկների սպանություն՝ նրանց գենդերային պատկանելության հիմքով, որը պայմանավորված է գենդերային անհավասարության և նրանց կյանքի և մարմնի վրա հայրիշխանական համակարգի կողմից ուժի և իշխանության հաստատման հանգամանքներով:

Հայրիշխանություն

Հասարակական կազմավորման ձև, որտեղ տղամարդն է քաղաքական իշխանության հիմնական կրողն ու բարոյական հեղինակությունը: Հայրիշխանությանը բնորոշ է տղամարդկային իշխանության ինստիտուտի և տղամարդկային արտոնությունների առկայությունը, միաժամանակ՝ կանանց ենթակայությունն ու ենթակա կարգավիճակը:

Սեքսիզմ

Եզրույթ, որը նկարագրում է տղամարդկանց ենթադրյալ գերիշխանությունը կանանց նկատմամբ: Սեքսիզմը դրսևորվում է հայրիշխանական հասարակությունում՝ ցանկացած մակարդակում:

Ֆեմինիզմ

Քաղաքական, սոցիալական շարժում, գաղափարախոսություն, որի առանցքային նպատակներից է կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության ապահովումն ու կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացումը հասարակության մեջ: Ֆեմինիզմը սերքսիզմին, սերքսիստական չարաշահմանն ու կեղեքմանը վերջ տալուն ուղղված շարժում է, որը ներառում է նաև համակարգային սերքսիզմի ընկալումը:

Կնասպանությունը՝ որպես կանանց նկատմամբ խտրականության դրսևորում, դեռևս ամբողջությամբ ուտումնասիրված չէ, ինչը պայմանավորված է նախևառաջ վստահելի և համապարփակ վիճակագրական տվյալների բացակայությամբ, ինչպես նաև տարբեր պետությունների կողմից կանանց սպանությունների՝ որպես կնասպանության որակման միասնական մոտեցման բացակայությամբ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ կանանց սպանությունների 35%-ը կատարվում է ներկա կամ նախկին գուգրնկերոջ կողմից: Սակայն այդ նույն աղբյուրը նշում է, որ այս վիճակագրությունն ամբողջական չէ¹:

Համաձայն ոչ պաշտոնական վիճակագրության՝ ամբողջ աշխարհում գենդերային հիմքով սպանություններից ավելի շատ կին է մահանում, քան քաղցկեղից, պատերազմներից կամ որևէ ինֆեկցիոն հիվանդությունից²: Համաձայն ՄԱԿ-ի տվյալների³՝ կանայք շատ ավելի հավանական է, որ կսպանվեն իրենց ներկա կամ նախկին գուգրնկերների և ընտանիքի անդամների կողմից, քան տղամարդիկ:

- 1 Տե՛ս Ընթրնել ու լուծել կանանց նկատմամբ բռնության խնդիրը, ԱՀԿ, 2012, հասանելի է http://apps.who.int/iris/bitstream/handle/10665/77421/WHO_RHR_12.38_eng.pdf;jsessionid=7E6EFECBD717D4371CE9D0E3EA3B05A6?sequence=1 հղումով:
- 2 Տե՛ս Կնասպանություն. գլոբալ խնդիր, որ գործել է պահանջում, էջ 16, 2013, ՄԱԿ-ի համակարգերի ակադեմիական խորհուրդ (ACUNS), Վիեննայի գրասենյակ, հասանելի է http://www.genevadeclaration.org/fileadmin/docs/Co-publications/Femicide_A%20Gobal%20Issue%20that%20demands%20Action.pdf հղումով:
- 3 Տե՛ս Սպանությունների գլոբալ մատյան, UNODC, 2013, էջ 13-14, հասանելի է https://www.unodc.org/documents/data-and-analysis/statistics/GSH2013/2014_GLOBAL_HOMICIDE_BOOK_web.pdf հղումով:

Կնասպանությունն այն հանցագործությունն է, որը հայրիշխանական համակարգի կողմից ապաքաղաքականացվում է և մեկնաբանվում որպես «խենթ անձանց կողմից» կատարվող հանցագործություն, ինչի հետևանքով էլ բազմաթիվ հանցագործներ չեն ստանում այդ հանցագործության դիմաց համաչափ պատիժ: Արդարացնելով այս սպանությունները՝ համակարգը հետապնդում է ինքնապահպանման միտում:

Կնասպանության արմատական պատճառների վերացմանը հասնելու համար կարևոր է հաշվի առնել, որ կնասպանությունը քաղաքական հանցագործություն է, որը պահանջում է համընդհանուր ճանաչում և համակարգային արձագանք: Շատ կարևոր է անդրադառնալ դրա իրական արմատներին և ելնել այն համոզումից, որ կնասպանությունն ուժի և իշխանության դրսևորման ծայրահեղ արտահայտությունն է կնոջ կյանքի և մարմնի վրա:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը

Ջեկույցի շրջանակներում կնասպանության դեպքերը, դրանց պատճառահետևանքային կապը գենդերային բռնության հետ ուսումնասիրվել են Ֆեմինիստական և մարդու իրավունքների մոտեցումներով⁴:

Ֆեմինիստական մոտեցումն ուսումնասիրում է կանանց սպանության դեպքերը՝ մինչև ժամանակ հակադրվելով հայրիշխանական կեղեքմանը: Ֆեմինիստական մոտեցման հիմնական գաղափարը հայրիշխանական համակարգի կողմից կիրառվող իշխանության վերլուծությունն է: Հայրիշխանության հիմնարար սկզբունքն է ուժն ու իշխանությունը, ընդ որում՝ կանանց և տղամարդկանց միջև այդ ուժերը բաշխված են անհավասարաչափ, որտեղ տղամարդիկ ունեն իշխանություն և բռնանում են կանանց նկատմամբ սեփական վերահսկողությունը պահպանելու համար⁵:

Մարդու իրավունքների մոտեցումը դիտարկում է կնասպանության ավելի լայն շրջանակը՝ համարելով այն կանանց նկատմամբ բռնության առավել ծայրահեղ դրսևորում⁶:

Հետազոտության արդիականությունը
պայմանավորված է կնասպանության՝ որպես
երևույթի առանձնահատկությունների բացահայտման

4 Տե՛ս Կնասպանության տեսություններն ու դրանց նշանակությունը հասարակական հետազոտություններում, 2016, էջ 5, հասանելի է https://www.violenceresearchinitiative.org/uploads/1/5/6/9/15692298/theories_femicide.pdf հղումով:

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում:

անհրաժեշտությամբ: Մասնավորապես հետազոտության ընթացքում կարևոր է եղել բացահայտել.

- *արդյոք կանանց սպանությունները կատարվում են ընտանիքի ներսում, թե այլ անձանց կողմից,*
- *ընտանեկան բռնության և կնասպանության դեպքերի միջև առկա պարճատահերևանքային կապը,*
- *ոչորքը կարգավորող ներպետական օրենսդրական և իրավակիրառ կարգավորումները, խնդիրներն ու բացերը,*
- *հանրայնացնել 2018-2021 թվականների կնասպանության հասանելի դեպքերը:*

Հատկանշական է, որ կնասպանության դեպքերի քննությամբ զբաղվող պետական մարմիններն առհասարակ չեն որակում կանանց սպանություններն ընտանիքում կամ ընտանիքից դուրս որպես կնասպանություն: Չեն դիտարկում նաև այդ սպանությունների արմատական պատճառները: Ավելին, պետությունը չունի մեկ միասնական տեղեկատվական բազա, որում ամփոփված կլինեն կնասպանության դեպքերը, և որը հիմք կծառայեր նաև հետազոտության համար: Այս տեսանկյունից հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև պետության՝ կնասպանության դեպքերի մասին համապարփակ տեղեկատվության և վիճակագրության վարման բացը մատնացույց անելու, այս դեպքերի կանխարգելման, հետաքննության և արդար դատաքննության ապահովման անհրաժեշտությունը բարձրաձայնելու տեսանկյունից:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Հայաստանում 2018-2021 թվականներին արձանագրված հասանելի կնասպանության դեպքերի առանձնահատկությունները:

Հետազոտության արդյունքում բացահայտված փաստերը և դրանց հիման վրա մշակված առաջարկները կներկայացվեն պետական կառույցներին և լայն հանրությանը:

Հաշվի առնելով պետության կողմից կնասպանության դեպքերի վիճակագրության վարման բացակայությունը՝ հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են 2018-2021 թվականներին կանանց սպանության բոլոր դեպքերը, որոնք այնուհետև գտվել են՝ ըստ որոշակի չափորոշիչների՝ դասակարգվելով որպես կնասպանություն:

Այդ չափորոշիչները ներառում են՝

- *սպանված կնոջ նկատմամբ հայրիշխանական ընկալումների ակնհայտ դրսևորումը՝ պայմանավորված հայրիշխանական համակարգի կողմից ուժի և իշխանության հաստատման հանգամանքներով,*
- *սպանված կնոջ կողմից ընտանեկան բռնության ենթարկվելու (շարունակական) բնույթը:*

Հետազոտության ինդիքներն են.

1. Բացահայտել կնասպանության դեպքերի ընդհանրական բնութագրիչներն ու ներկայացնել դրանք քանակական տվյալների տեսքով (տարիք, բնակավայր, ամուսնական կարգավիճակ, մեղադրյալի հետ ազգակցական կապ, սպանություն կատարելու հանգամանքներ, պատժի նշանակում, մեղմացող և ծանրացող հանգամանքներ ու վերաբերելի այլ բնութագրիչներ):
2. Պարզել, թե ՀՀ-ում կնասպանության դեպքերի բացահայտման և կանխարգելման գործընթացներում արձագանքման ինչպիսի մեխանիզմներ ու մոտեցումներ են գործում:

3. Մշակել առաջարկներ՝ հիմնվելով բացահայտված փաստերի վրա, որոնք կնպաստեն կնասպանության դեպքերով արդար դատաքննությանը:

Հետազոտության վարկածները.

1. *Հայաստանում պետական մակարդակով չկան կնասպանության՝ որպես երևույթի կանխարգելման և արձագանքման արդյունավետ մեխանիզմներ:*
2. *Հանրապետությունում կնասպանության հիմնական դեպքերը տեղի են ունենում ընտանիքի ներսում՝ ուժերի անհավասար բաշխման և իշխանության քանեցման հետևանքով:*

Կնասպանության դեպքերի ուսումնասիրության շրջանակը

Հետազոտության շրջանակներում ներկայացվում են կնասպանության դեպքերը երկու հիմնական բաժիններով՝

- 1) 2018-2021 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գրանցված և DataLex դատական տեղեկատվական համակարգում կնասպանության հասանելի դեպքեր,

Կնասպանության իրական ցուցանիշների բացակայությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

- *Հայաստանի Հանրապետությունում առկա չեն կնասպանության դեպքերի վերաբերյալ միասնական, ճշգրիտ վիճակագրական տվյալներ:*

Առհասարակ գենդերային բռնությունը լատենտային բնույթ ունեցող բռնության տեսակ է, ինչը նշանակում է, որ բռնության նշված տեսակի վերաբերյալ տեղեկություններն ու վիճակագրական տվյալներն ամբողջությամբ չեն արտացոլում բռնության իրական պատկերը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վիճակագրական տվյալների ոչ ամբողջական և իրական տվյալների բացակայության խնդրին անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն Հայաստանի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում՝

- *Ջեկույցի կազմման ընթացքում հնարավոր չի եղել ուսումնասիրել մինչդարական փուլում գրնվող կնասպանության վերաբերյալ քրեական գործերը: Ուսումնասիրության համար հասանելի չեն եղել նաև կարճված քրեական գործերը, ինչպես նաև այն քրեական գործերը, որոնց հարուցումը մերժվել է:*
- *Ջեկույցի կազմման ընթացքում ուսումնասիրվել են բացառապես այն քրեական գործերը, որոնք հասանելի են DataLex դատական տեղեկատվական համակարգում և այն շրջանակներում ու ծավալներով, որոնք ներկայացված են տեղեկատվական այդ հարթակում: Նշվածի կապակցությամբ հարկ է նկատել, որ 2018-2021 թվականների ընթացքում կնասպանության դեպքերը, որոնց վերաբերյալ համապարասիան տեղեկատվություն առկա չէ այդ համակարգում, կամ այդ տեղեկատվության հասանելիությունը սահմանափակ է, նույնպես չեն ներառվել զեկույցում:*
- *Ուսումնասիրության ընթացքում DataLex դատական տեղեկատվական համակարգի քրեական գործերի ուսումնասիրությամբ հայտնաբերվել են քրեական գործեր, որոնցում կարարված հանցագործությամբ տուժող անձի սեռը պարզել հնարավոր չի եղել՝ գործերում տուժողի անվան ոչ ամբողջական լինելու, ինչպես նաև սեռի վերաբերյալ նշում չպարունակելու*

7 Տես ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/402/29/PDF/N1640229.pdf?OpenElement>

պատճառով, և, որպես հետևանք, նշված քրեական գործերը ևս չեն ներառվել սույն զեկույցում:

- *Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի՝ ՀՀ դատական դեպարտամենտին հասցեագրված գրություններն անպատասխան են մնացել, ինչի հետևանքով հնարավոր չի եղել ներկայացնել նաև այն դատական գործերը, որոնք հնարավոր կլինեին ուսումնասիրել տեղեկատվության տրամադրման պարագայում:*

Արդյունքում՝ DataLex համակարգի միջոցով ուսումնասիրվել են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ, 105-րդ, 109-րդ, 110-րդ, 111-րդ հոդվածներով, ինչպես նաև 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14)-րդ կետով, 131-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետով, 133-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետով, 138-րդ հոդվածի 2-րդ մասի 4)-րդ կետով և 139-րդ հոդվածի 2-րդ մասի 4)-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներ պարունակող քրեական գործերը:

Նշված հոդվածներով DataLex դատական տեղեկատվական համակարգի «Խելացի որոնում» գործիքի միջոցով առկա է եղել ընդհանուր 781 քրեական գործ, որոնցից՝

- 571 քրեական գործ որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով,
- 28 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածով,
- 72 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածով,
- 24 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով,
- 84 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ

հողվածի 2-րդ մասի 14)-րդ կետով,

— 1 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հողվածի 3-րդ մասի 2)-րդ կետով,

— 1 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հողվածի 3-րդ մասի 2)-րդ կետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 111-րդ հողվածով, ինչպես նաև 138-րդ հողվածի 2-րդ մասի 4)-րդ կետով և 139-րդ հողվածի 2-րդ մասի 4)-րդ կետով քրեական գործեր չեն հայտնաբերվել DataLex համակարգի «Խելացի որոնում» գործիքով:

Նշված 781 քրեական գործերը նախ խմբավորվել են՝ ըստ հանցագործության կատարման տարեթվի և տուժողների սեռի, այնուհետև գործերի ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են կնասպանության դեպքերը:

Արդյունքում՝ ուսումնասիրված բոլոր քրեական գործերից առանձնացվել են 2018-2021 թվականների ընթացքում կատարված 12 կնասպանության դեպքեր:

2) 2018-2021 թվականների ընթացքում Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիայի հավաքագրած կնասպանության դեպքերը, որոնք հրապարակվել են լրատվամիջոցներով:

Ջեկույցում ներկայացվում են Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիայի հավաքագրած կնասպանության այն դեպքերը, որոնք հրապարակվել են լրատվամիջոցների կողմից, և որոնց վերաբերյալ DataLex դատական տեղեկատվական համակարգում զեկույցի կազմման ընթացքում որևէ տեղեկություն առկա չի եղել:

Այն բոլոր կնասպանության դեպքերը, որոնք հավաքագրել է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիան, և որոնց վերաբերյալ DataLex դատական համակարգում առկա են

եղել տվյալներ, ներկայացվել են նախորդիվ ներկայացված մեթոդաբանությամբ:

Լրատվամիջոցներով հրապարակված գործերի վերաբերյալ ներկայացվել է բացառապես այն տեղեկությունը, որը հրապարակել են լրատվական կայքերը:

Արդյունքում՝ ներկայացվել են լրատվամիջոցներով հրապարակված և Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի հավաքագրած 24 կնասպանության դեպքեր:

Կնասպանության դեպքերի ներկայացման մեթոդաբանությունը

Կնասպանության դեպքերը ներկայացվում են երեք ենթավերնագրերի ներքո.

- 1) Կնասպանության դեպքեր, որոնցով քրեական գործերի դատաքննությունն ավարտված է, և առկա է դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:
- 2) Կնասպանության դեպքեր, որոնք դատարանի գնահատմամբ կատարվել են անմեղսունակության վիճակում:
- 3) Լրատվամիջոցներով հրապարակված կնասպանության դեպքեր, որոնք հավաքագրել է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան:

Կնասպանություն եզրույթն ու դրա կիրառման շրջանակը⁸

Կնասպանությունը համեմատաբար նոր եզրույթ է, որը բնութագրում է կնատյացության հիմքով կանանց սպանության դեպքերը, սակայն երևույթը, որն այն բնութագրում է, այնքան հին է, որքան ինքնին հայրիշխանությունը⁹:

Անդրադարձ կնասպանություն եզրույթին տեսական մակարդակում

1970-ական թվականներին տեսական մակարդակում սկսեց շրջանառվել «կնասպանություն» եզրույթն, ու առաջարկվեց որպես այլընտրանք գենդերային տեսանկյունից ավելի չեզոք՝ «մարդասպանություն» (անգլերեն՝ homicide) եզրույթին: Նման եզրույթի շրջանառությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ մարդասպանության սահմանումը չէր արտահայտում խտրական, ճնշող, անհավասար և համակարգային բռնությունը կանանց նկատմամբ:

Դայանա Ռասելը և Ջեյն Կապուտին 1990 թվականին սահմանեցին եզրույթը որպես «...տղամարդկանց կողմից կանանց սպանություն, որի շարժառիթն են արելությունը, արհամարհանքը, հաճույքը կամ կնոջ նկատմամբ սեփականապահական նկրտումները»¹⁰:

Հետագայում Դայանա Ռասելն ու Ջիլ Ռեդֆորդն

- 8** Տե՛ս ավելի մանրամասն «Լռեցված ձայներ»։ Կնասպանությունը Հայաստանում. 2016-2017 թվականների գեկույցը հղմամբ՝ <https://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2019/04/femicide2018.pdf>
- 9** Տե՛ս Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել, Կնասպանություն. կանանց սպանությունների քաղաքականությունը, «Մակմիլան» հրատ., 2012, էջ 25:
- 10** Տե՛ս Կապուտի Ջ., Ռասել Դ., Կնասպանություն. խոսելով անխոսելին, էջ 34-37, Ms. 1990;1(2)

ատաջարկեցին մեկ այլ սահմանում, մասնավորապես՝ «...արելության հիմքով կնոջ սպանությունը տրամաբար կողմից»¹¹, իսկ արդեն 2001 թվականին Դայանա Ռասելն ու Ռոբերտա Հարմար սահմանումն ընդլայնեցին իբրև՝ «կանանց սպանություն տրամաբարկանց կողմից նրանց կին լինելու պատճառով», որպեսզի ներառեն ինչպես սեքսիզմի հիմքով, այնպես էլ ատելության հիմքով բոլոր սպանությունները¹²:

Անդրադարձ կնասպանություն եզրույթին միջազգային մակարդակում

2012 թվականին Վիեննայում կնասպանություն երևույթի քննարկմանը նվիրված գազաթնաժողովում մշակվեց Կնասպանության մասին Վիեննայի հռչակագիրը¹³: Հռչակագրի համաձայն՝ կնասպանությունը սահմանվում է կանանց և աղջիկների՝ իրենց գենդերի պատճառով սպանություն, որը կարող է լինել.

- 1) կանանց սպանություն նախկին և ներկա գուգրնկերների կողմից,
- 2) խոշտանգումներով և կնատյացությամբ պայմանավորված սպանություն,
- 3) «պատվի համար» կամ «պատվի պատրվակով» կանանց և աղջիկների սպանություններ,
- 4) զինված հակամարտություններում կանանց և աղջիկների միտումնավոր սպանություն,
- 5) կանանց՝ օժիտին վերաբերող հարցերի պատճառով սպանություն,

11 Տես Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել, Կնասպանություն. կանանց սպանությունների քաղաքականությունը, «Մակմիլան» հրատ., 2012, էջ 3:

12 Տես Ռասել Դ. Ե. Հ., ՁԻԱՀ-ը՝ որպես զանգվածային կնասպանություն. Հարավային Աֆրիկան՝ կիզակետում, Կնասպանությունը գլոբալ հեռանկարում, Նյու Յորք, Teacher's College Press, 2001 թվական, էջ 100-114:

13 Տես Կնասպանության մասին Վիեննայի հռչակագիր, հասանելի է <http://www.dianarussell.com/vienna-declaration-.html> հղումով:

- 6) կանանց և աղջիկների՝ իրենց սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության պատճառով սպանություն,
- 7) տեղաբնիկ և ցեղաբնակ կանանց և աղջիկների՝ իրենց գենդերի պատճառով սպանություն,
- 8) կանանց սեռական օրգանների խեղման հետևանքով առաջացած մահ,
- 9) կախարդություն կամ հմայություններ անելու մեղադրանքով կանանց սպանություն,
- 10) կանանց և աղջիկների սպանություն՝ կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների գործարքների, մարդկանց թրաֆիքինգի և սովորական սպառազինության տարածման հետ առնչություն ունեցող խմբերի կողմից և այլ դրսևորումներ:

Վիեննայի հռչակագրից մեկ տարի անց՝ 2013 թվականի դեկտեմբերին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց թիվ 68/191 բանաձևը, որը վերաբերում է կանանց սպանություններին, այդ թվում՝ ներկա և նախկին զուգընկերների կողմից: Բանաձևում օգտագործվում է կանանց գենդերային սպանություններ եզրույթը, սակայն նշվում է, որ ընդունելի անվանում է համարվում նաև կնասպանությունը (ֆեմիցիդ), որն այսօր կիրառվում է որոշ երկրների օրենսդրությունում¹⁴:

Կնասպանության տեսակները

Տեսաբանների մի խումբ կնասպանության դեպքերին է դասում կնոջ ցանկացած սպանություն, այդ թվում՝ ոչ

¹⁴ Տես Կանանց և աղջիկների գենդերային հիմքով սպանությունների դեմ գործողությունների իրականացման մասին բանաձև, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 2014, հասանելի է https://www.unodc.org/documents/commissions/CCPCJ/Crime_Resolutions/2010-2019/2013/General_Assembly/A-RES-68-191.pdf հղումով:

կանխամտածված, որը նպատակ ունի վերահաստատել կնոջ վրա հայրիշխանական համակարգի կողմից կիրառվող իշխանությունը, ինչպիսին են, օրինակ՝ կանանց ծննդաբերության, չպաշտպանված հղիության արհեստական ընդհատումների հետևանքով տեղի ունեցած մահացության դեպքերը¹⁵, քանի որ հայրիշխանական համակարգը չի արժևորում կնոջ կյանքն այնպես, ինչպես կարժևորեր տղամարդու կյանքը և ըստ այդմ՝ չի ստեղծում համապատասխան պայմաններ կամ ստեղծում է լրացուցիչ խոչընդոտներ, որոնք ազդում են կնոջ առողջության և կյանքի վրա:

Հեղինակներ Ռեդֆորդը և Ռասելը նշում են, որ կնասպանությունն ունի շատ տարբեր դրսևորումներ, ինչպես, օրինակ՝ *ռասիստական կնասպանությունը*, երբ սևամորթ կանայք սպանվում են տղամարդկանց կողմից իրենց ռասայական պատկանելության պատճառով, *հոմոֆոբ կնասպանությունը*, երբ լեսբի և բիսեքսուալ կանայք են սպանվում իրենց սեռական կողմնորոշման պատճառով, *ամուսնական կնասպանությունը*, որը կատարվում է ներկա կամ նախկին գուգրնկերոջ կողմից, և *կնասպանություն*, որը կատարվում է *անծանոթի կողմից*¹⁶:

Ներկա կամ նախկին գուգրնկերոջից բացի, կնասպանությունը կարող է կատարվել¹⁷

— ընտանիքի այլ անդամների կողմից (հայր, որդի, սկեսրայր),

15 Տե՛ս Կնասպանության ընկալման ամրապնդում: Կիրառելով հետազոտությունը խթանելու գործողությունները և հաշվետվողականությունը, Վաշինգտոն, էջ 29, հասանելի է https://path.azureedge.net/media/documents/GVR_femicide_rpt.pdf հղումով:

16 Տե՛ս Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել, Կնասպանություն. կանանց սպանությունների քաղաքականությունը, «Մակմիլան» հրատ., 2012, էջ 7:

17 Տե՛ս Ռասել Դ. Ե. Հ., Հարոն Ռ. Ա. (խմբ.), Կնասպանությունը գլոբալ հեռանկարում, էջ 8-12, Նյու Յորք, Teachers College Press, 2001 թվական:

- մերձավոր ազգականների կամ ընկերների, հարևանների կողմից,
- անձանոթի կողմից:

Ընտանեկան բռնության և կնասպանության միջև առկա կապը

Կանանց նկատմամբ բռնությունը խտրականության դրսևորման առավել տարածված ձևերից է, որը գնահատվում է որպես մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խախտում: Կանանց նկատմամբ բռնությունը հիմնականում տեղի է ունենում ընտանեկան միջավայրում և դրսևորվում է ինչպես *ֆիզիկական*, այնպես էլ *հոգեբանական*, *սեռական*, *փնտրեսական* ձևերով: Ամբողջ աշխարհում ընտանեկան բռնությունից հիմնական տուժողները կանայք ու աղջիկներն են. յուրաքանչյուր երրորդ կինն աշխարհում ենթարկվում է բռնության որևէ տեսակի ներկա կամ նախկին գուգընկերոջ կողմից¹⁸:

Ընտանեկան բռնությունը ծայրահեղ խնդիր է, որին բախվում են նաև Հայաստանում բնակվող կանայք: Հայաստանի ողջ տարածքում անցկացված հարցման համաձայն¹⁹ տղամարդ գուգընկեր կամ կողակից ունեցած կանանց 22.4%-ը ենթարկվել է *ֆիզիկական*, 19.5%-ը՝ *փնտրեսական*, իսկ 45.9%-ը՝ *հոգեբանական բռնության*: Նույն հետազոտությունը պարզել է նաև կանանց նկատմամբ բռնության մշակութային ընդունելիությունը. հարցվածների *մեկ երրորդից ավելին նշել է, որ կանայք պետք է հանդուրժեն բռնությունը, որպեսզի պահպանեն իրենց ընտանիքը, իսկ շուրջ երեք քառորդն էլ արդարապես է համոզմունք, որ կողակցի կողմից բռնությունը կարելի է արդարացնել*:

18 Տե՛ս Կանանց նկատմամբ բռնություն, հիմնական փաստեր, ԱՀԿ, 2017, հասանելի է <http://www.who.int/news-room/fact-sheets/detail/violence-against-women> հղումով:

19 Տե՛ս Վլադիմիր Օսիպով, Ջինա Սարգիզովա, Տղամարդիկ և գեղդերային հավասարության հիմնախնդիրները Հայաստանում, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2016:

Նշվածի համատեքստում հարկ է ընդգծել, որ որևէ երկրում վիճակագրական տվյալները չեն արտացոլում ընտանեկան և կանանց նկատմամբ բռնության ամբողջական և իրական պատկերը, քանի որ որոշ դեպքերում, ինչպես Հայաստանում, ընտանեկան բռնության դեպքերի միասնական վիճակագրություն չի վարվում, և ավելին՝ այս բռնարարքներն ունեն բարձր մակարդակի քողարկվածություն (լատենտայնություն)²⁰:

Կնասպանության հնարավոր ռիսկերից կանանց պաշտպանության հարցում, թերևս, մեծ նշանակություն ունեն պետության պարտավորությունները: Այս տեսանկյունից կարևոր է, որ *կնասպանության դեպքերը դադարեն դիտարկվել միայն հանցագործությունը կատարած անձի պատրասխանատվության շրջանակում, այլ համարվեն հանրային և պետական պատրասխանատվության առարկա:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատված «Օփուզն ընդդեմ Թուրքիայի»²¹ գործով դատարանը ճանաչել է, որ պետությունը հաշվետու պետք է լինի այն բոլոր դեպքերում, երբ ձախողել է պաշտպանել կանանց իրավունքներն ընտանեկան բռնությունից: «Օփուզն ընդդեմ Թուրքիայի», հետագայում նաև «Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի»²² գործերով նախադեպային վճիռները հիմք ծառայեցին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչի կանանց նկատմամբ բռնությունը որպես համակարգային խնդիր, որն արտացոլում է ուժերի անհավասար բաշխումը:

Այս դեպքերով Եվրոպական դատարանն ընտանեկան բռնությունից կանանց պաշտպանության պատասխանատվությունը դրել է պետության վրա:

20 Նույն տեղում, էջ 305:

21 Տե՛ս ՄԻԵԴ, «Օփուզն ընդդեմ Թուրքիայի», հասանելի է <https://hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/?library=ECHR&id=001-92945&filename=001-92945.pdf> հղումով:

22 Տե՛ս ՄԻԵԴ, «Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի», հասանելի է https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/resources/Kontrova%20v.%20Slovakia_en.asp հղումով:

**ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ
ԱՎԱՐՏՎԱԾ
ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ
ՕՐԻՆԱԿԱՆ
ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ
ԴԱՏԱՎՃՈՌՎ
ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԴԵՊՔԵՐ**

Լուսիկ Մնացականյան (հայտնի չէ - 2018)

Լուսիկ Մնացականյանին ինքնասպանության է հասցրել ամուսինը²³

Գործի դատավարական նախապատմությունը

2018 թվականի մայիսի 13-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Տիգրան Նիկոլյանն իրենց առանձնատանը ձեռքերով բազմաթիվ և անկանոն հարվածներ է հասցրել Լուսիկ Մնացականյանի մարմնի տարբեր մասերին և պատճառել առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ: Նկարագրած գործողությունների հետևանքով Լուսիկ Մնացականյանի մոտ առաջացել է անելանելի և անօգնական վիճակ, որով պայմանավորված 2018 թվականի մայիսի 19-ին Լուսիկ Մնացականյանն իրենց առանձնատանը խամել է թունաքիմիկատներ, ինչի հետևանքով նույն օրը՝ ժամը 21:55-ին, Եղեգնաձորի բժշկական կենտրոնում արձանագրվել է նրա մահը:

Քննությանը հետազոտված ապացույցները

1994 թվականից Լուսիկ Մնացականյանն ու Տիգրան Նիկոլյանը գտնվել են ամուսնական հարաբերությունների մեջ: Տիգրան Նիկոլյանը պարբերաբար բռնություն է գործադրել Լուսիկ Մնացականյանի նկատմամբ: Հերթական անգամ բռնության դրսևորումներից հետո, որդիներից մեկի հետ խոսելիս Լուսիկ Մնացականյանը նշել է. *«Հայրդ ինձ կսպանի, կամ հորդ դարդից ինձ վերջ եմ տալու»:*

2018 թվականի մայիսի 13-ին Լուսիկ Մնացականյանն ողջ օրն աշխատել է գյուղի այգիներում, մնացել անձրևի տակ, ժամը 17:00-ի սահմաններում թրջված վերադարձել է տուն: Որդուն խնդրել է, որ իր համար սուրճ եփի, վերջինս

23 Տե՛ս քրեական գործ № ԱՎԴ-4/0014/01/18:

ծնողների համար սուրճ է եփել, սրճելու ընթացքում Տիգրան Նիկոլյանը հարցրել է կնոջը՝ արդյոք գումար բերել է տուն, թե՞ ոչ: Վերջինս նրան պատասխանել է, որ այդ օրը օրավարձ չի ստացել, սակայն Տիգրան Նիկոլյանը չի հավատացել նրան, ագրեսիվացել է, ձեռքերով 10-15 անգամ հարվածել է Լուսիկ Մնացականյանի մարմնի տարբեր մասերին:

Նշվածի կապակցությամբ Լուսիկ Մնացականյանը ցանկացել է հաղորդում ներկայացնել ոստիկանություն: Տեղեկանալով իրեն ծեծի ենթարկելու համար ոստիկանությունում հաղորդում տալու վերաբերյալ մոր մտադրության մասին՝ որդիներից մեկը խնդրել է նման բան չանել, խոստացել է, որ հորը կտանի բուժման: Լուսիկ Մնացականյանը խոստացել է, որ հաղորդում չի տա:

Դեպքի հաջորդ օրը որդին Տիգրան Նիկոլյանին տարել է Նուբարաշենի հոգեբուժարան, սակայն վերջինիս ստացիոնար բուժման չեն ընդունել: Նշվածով պայմանավորված՝ Լուսիկ Մնացականյանը 2018 թվականի մայիսի 15-ին ներկայացել է ոստիկանություն և հաղորդում տվել ամուսնու կողմից իրեն ծեծի ենթարկելու վերաբերյալ, հաղորդման շուրջ տվել է բացատրություն, հայտնել, որ ամուսնու հետ չի հաշտվում, խնդրել է նրան օրենքով սահմանված կերպով ենթարկել քրեական պատասխանատվության:

2018 թվականի մայիսի 16-ին Լուսիկ Մնացականյանը ներկայացել է դատաբժշկական փորձաքննության, որից հետո մեկնել է Երևան՝ ավագ որդու մոտ: Վերջինս, տեղեկանալով ծնողների *վիճարանության* մասին, մորը հորդորել է վերադառնալ գյուղ և շարունակել հոր հետ ապրել:

2018 թվականի մայիսի 18-ին Տիգրան Նիկոլյանը գնացել է Երևան՝ Լուսիկ Մնացականյանին տուն բերելու համար: Լուսիկ Մնացականյանն ու Տիգրան Նիկոլյանը զրուցել են միմյանց հետ, Տիգրան Նիկոլյանը նրան ասել է, որ երկուշաբթի Լուսիկ Մնացականյանը գնա ոստիկանության բաժին ու գործը հետ վերցնի, բայց Լուսիկը հրաժարվել է:

Ըստ քրեական գործի տվյալների՝ 2018 թվականի մայիսի 19-ին Լուսիկ Մնացականյանն իրենց առանձնատան ավտոտնակում թունաքիմիկատներ է խմել, ապա բարձրացել է տուն, եղել է հյուրասենյակում: Նույն օրը՝ ժամը 18:30-ի սահմաններում, կրտսեր որդին վերադառնալով տուն, մորը գտել է տան երկրորդ հարկի հյուրասենյակում՝ բազկաթոռին նստած: Վերջինս որդուն խնդրել է մոտենալ իրեն, ասել է, որ ցանկանում է հրաժեշտ տալ, որովհետև մահանում է, դեղ է խմել, հյուրասենյակում թունաքիմիկատի սուր հոտ է տարածված եղել: Որդին հարցրել է մորը՝ արդյոք հայրն է մի բան արել, բայց վերջինս ասել է, որ ինքն է դեղ խմել: Տեսնելով, որ մայրը լավ չէ, որդին զանգահարել է շտապօգնություն: Ժամանած շտապօգնության անձնակազմը առաջին օգնություն է ցույց տվել Լուսիկ Մնացականյանին և տեղափոխել հիվանդանոց, որտեղ նույն օրը՝ ժամը 21:55-ին, Լուսիկ Մնացականյանը մահացել է:

Դատարանի եզրահանգումը

Վերլուծելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ դատարանը վճռել է Տիգրան Նիկոլյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով (*ապառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիրավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը պարժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով*) և ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասով (*անձին դիրավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պարճատելը, եթե դա չի առաջացրել Քրեական օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում*

են օրենսգրքի 309.1-ին հոդվածով նախատեսված հանցագործության հարկանիշները պարժվում է ազատագրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով)
նախատեսված հանցագործություններ կատարելու մեջ:
ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով Տիգրան Նիկոլյանին դատապարտել է ազատագրկման 3 տարի ժամկետով, իսկ 119-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատագրկման 2 տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված 3 տարի ժամկետով ազատագրկմանը մասնակիորեն գումարել է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասով 2 տարի ժամկետով նշանակված պատժից 1 տարի ժամկետով ազատագրկումը և որպես վերջնական պատիժ նշանակել ազատագրկում 4 տարի ժամկետով: Միաժամանակ դատարանը վճռել է Տիգրան Նիկոլյանի նկատմամբ կիրառել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 01.11.2018 թվականի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետը և Տիգրան Նիկոլյանին ազատել նրա նկատմամբ որպես պատիժ նշանակված 4 տարի ժամկետով ազատագրկումից:

Մարինե Բեգյան (հայտնի չէ - 2018)

Մարինե Բեգյանին սպանել է ամուսինը²⁴

Գործի դատավարական նախապատմությունը

2018 թվականի մայիսի 11-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, կասկածելով կնոջն արտամուսնական կապեր ունենալու

²⁴ Տե՛ս քրեական գործ № ՏԴ2/0057/01/18:

մեջ, Մանվել Ասրյանը ծալովի դանակով կտրել է Մարինե Բեգյանի պարանոցը, որի հետևանքով ստացած կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքից Մարինե Բեգյանը մահացել է:

Քննությանը հետազոտված ապացույցները

Կատարված հանցագործության մեջ Մանվել Ասրյանն իրեն մասնակիորեն մեղավոր է ճանաչել և օգտվելով իր դատավարական իրավունքից՝ հրաժարվել է ցուցմունք տալուց:

Գործով որպես վկա ներգրավված Մանվել Ասրյանի և Մարինե Բեգյանի որդին ցուցմունք է տվել առ այն, որ հայրն ու մայրը մշտապես անհաշտ են եղել: Մի քանի օր լավ են եղել իրար հետ, մի քանի օր՝ վատ: Այդպես եղել է գրեթե միշտ: Պատճառը եղել է հոր կողմից մորն անուսնական անհավատարմության համար մեղադրելը: Սպանությունից մի քանի օր առաջ Մանվել Ասրյանը վիճաբանել է Մարինե Բեգյանի հետ, գրպանից հանել է դանակ և ցանկացել հարվածել Մարինեին, սակայն տանը գտնվող հորաքույրերը միջամտել են և թույլ չեն տվել:

Գործով ներգրավված մեկ այլ վկայի ցուցմունքով՝ Մանվել Ասրյանի և Մարինե Բեգյանի ընտանիքում հաճախ են վիճաբանություններ եղել. *«Ցանկացած ընտանիքում էլ կարող են վեճեր լինել. դա այդ ընտանիքի գործն է»:*

Դատահոգերուժական փորձաքննության եզրակացությամբ՝ Մանվել Ասրյանը հոգեկան հիվանդություն չի ունեցել: Ինչպես հանցագործությունը կատարելիս, այնպես էլ դատաբժշկական փորձաքննության ժամանակ նա կարող էր գիտակցել իր գործողությունների բնույթը, վտանգավորությունը, հաշիվ տալ իրեն կատարած արարքների համար և ղեկավարել դրանք:

Հանցագործությունը կատարելիս *«փորձաքննվողը չի*

գրնվել նաև հոգեկան գործունեության որևէ ժամանակավոր հիվանդագին խանգարված վիճակում», որը կարող էր զրկել նրան գիտակցել իր գործողությունների վտանգավորությունն ու ղեկավարել դրանք, այլ եղել է ակոհոլ գործածած, ուստի նրան մեղսագրվող արարքի նկատմամբ Մանվել Ասրյանին հարկ է ճանաչել մեղսունակ:

Դատարանի եզրահանգումը

Վերլուծելով դատաքննությանը հետազոտված ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ դատարանը հանգել է այն հետևության, որ Մանվել Ասրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առնում այն, որ նա մասնակիորեն խոստովանել է մեղքը և զղջացել կատարածի համար, նախկինում ոչնչով արատավորված չէ, բնութագրվում է դրականորեն: Դատարանը պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չի դիտարկել և Մանվել Ասրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (սպանությունը՝ սպորինսարար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը՝ պարծվում է ազատագրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով) և այդ հոդվածի սանկցիայով նրան դատապարտել ազատազրկման 10 տարի ժամկետով, ինչպես նաև նրան մեղավոր է ճանաչել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով (սպորինի կերպով գազային, սառը կամ նեյրոդական գենք կրելը՝ պարծվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապարիկից վեցհարյուրապարիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով) և այդ հոդվածի սանկցիայով նրան դատապարտել ազատազրկման 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով նշանակված

պատիժները լրիվ գումարելու միջոցով սահմանվել է վերջնական պատիժ՝ ազատազրկում՝ 10 տարի 6 ամիս ժամկետով:

Քրիստինե Իսկանդարյան (1998-2018)

Քրիստինե Իսկանդարյանին սպանել է նրա հետ փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը²⁵

Գործի դատավարական նախապատմությունը

2018 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 06:30-ի սահմաններում, գտնվելով ավտոբուսի ազդեցության տակ, Իլլարիոն Նունուշյանը խանդի հողի շուրջ վիճաբանել է իր հետ փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող Քրիստինե Իսկանդարյանի հետ, որի ընթացքում շուրջ 5-10 րոպե տևողությամբ ձեռքերով, ոտքերով, ինչպես նաև մետաղյա ամրանով և մետաղյա թեյնիկով բազմաթիվ հարվածներ է հասցրել Քրիստինե Իսկանդարյանի գլխին, դեմքին, որովայնին, մեջքին, ինչպես նաև մարմնի մյուս մասերին՝ նրա առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, ինչի հետևանքով ստացած վնասվածքներից հաջորդ օրը Քրիստինե Իսկանդարյանը մահացել է «Էրեբունի» բժշկական կենտրոնում:

Քննությամբ հետազոտված ապացույցները

Մինչև դատաքննությունը սկսելն Իլլարիոն Նունուշյանը միջնորդել է դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարել է, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրենց պարզ է, համաձայն է մեղադրանքի հետ:

²⁵ Տե՛ս քրեական գործ № ԵՂ/0081/01/19:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը Իլլարիոն Նունուշյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտարկել այն, որ նա իրեն լիովին մեղավոր է ճանաչել և անկեղծորեն գղջացել է կատարածի համար, խնամքին է գտնվում երկու անչափահաս երեխա, որոնցից մեկը մինչև 14 տարեկան: Դատարանը որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող միակ հանգամանք է դիտարկել հանցանքը կատարելու ռեցիդիվն ու Իլլարիոն Նունուշյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14)-րդ կետով (*դիտարկությանը առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ անզգուշությանը առաջացնելով տուժողի մահ՝ պատժվում է ազատազրկմամբ հինգից տասը տարի ժամկետով*) և դատապարտել ազատազրկման 7 տարի ժամկետով: Միաժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատժին մասնակի գումարել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.12.2018 թվականի դատավճռով նշանակված 2 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկումից 1 տարին և վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 8 տարի ժամկետով:

Լուսինե Խաչատրյան (1979-2018)

Լուսինե Խաչատրյանին սպանել է հայրը²⁶

Գործի դատավարական նախապատմությունը

2018 թվականի ապրիլի 20-ին՝ ժամը 04:00-ի սահմաններում, Համլետ Խաչատրյանը դատեր՝ Լուսինե Խաչատրյանի կողմից քնած ժամանակ ձայներ հանելու դրդապատճառով վիճաբանել է նրա հետ՝ պահանջելով, որ ձայներ չհանի, որից հետո մոտեցել է Լուսինե Խաչատրյանին և քնած վիճակում

²⁶ Տե՛ս քրեական գործ № ԱՎԴ-2/0024/01/18:

երկու բռնցքով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա կենսական կարևոր նշանակություն ունեցող օրգաններին՝ գլխի, դեմքի, կրծքավանդակի շրջանին և մարմնի այլ մասերին, այնուհետև ձեռքով բռնել է Լուսինե Խաչատրյանի պարանոցի դիմացի հատվածից, մյուս ձեռքով սեղմելով փակել է բերանն ու խեղդել նրան:

Քննությանը հետագոտված ապացույցները

Դատաքննության ընթացքում Համլետ Խաչատրյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել և հրաժարվել է ցուցմունք տալուց՝ պնդելով նախաքննության ընթացքում տված ցուցմունքը, համաձայն որի՝ դատեր հետ հաճախակի վիճաբանել է նրա կողմից ակտիոլ օգտագործելու պատճառով:

Ըստ քրեական գործի տվյալների՝ հանցագործության կատարման օրը՝ ժամը 04:00-ի սահմաններում, Համլետ Խաչատրյանը որոշել է քնել, սակայն միևնույն սենյակում գտնվող դուստրը քնած ժամանակ ձայներ է հանել, գոռացել է, ինչն «ազդել է իր նյարդերի վրա»: Բարկացել է դատեր վրա, պահանջել է ձայն չհանել, սակայն Լուսինեն քնած է եղել, չի լսել իրեն և շարունակել է ձայներ հանել շուրջ 20 րոպե, ինչն էլ ավելի է նյարդայնացրել իրեն: Մոտեցել է դատեր մահճակալին և բռնցքներով հարվածներ է հասցրել Լուսինեի գլխին և մարմնի տարբեր մասերին, հարվածել է ամբողջ ուժով, ինչի արդյունքում Լուսինեն արթնացել է և սկսել է գոռգոռալ, խնդրել է իրեն չհարվածել և խոստացել է այլևս չխմել: Այնուհետև Համլետ Խաչատրյանը բռնել է Լուսինե Խաչատրյանի պարանոցից ու սեղմելով խեղդամահ արել նրան:

Իր խոսքով՝ հետո պատկել է բազմոցին և շարունակել է խմել, իսկ առավոտյան՝ ժամը 9:00-ի սահմաններում, մոտենալով դատերը՝ պարզել է, որ նա չի շարժվում, զգացել է, որ մահացել է, և այդ մասին հայտնել է հարևաններին՝ խնդրելով զանգահարել շտապօգնություն:

Գործով ներգրավված հարևանները ցուցմունքներով հայտնել են, որ խուսափել են շփումներ ունենալ Համլետ Խաչատրյանի և Լուսինե Խաչատրյանի հետ: Նշել են նաև նրանց տնից մշտապես լսվող կոիվների մասին՝ միաժամանակ հայտնելով ինչպես Համլետի, այնպես էլ Լուսինե Խաչատրյանի կողմից հաճախակի ակոհողի օգտագործման հանգամանքը:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը Համլետ Խաչատրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտարկել նրա հետհանցավոր դրական վարքագիծը, որը դրսևորվել է խոստովանական ցուցմունքներ տալու, մեղքն ընդունելու և կատարածի համար զղջալու համակցությամբ: Դատարանի գնահատմամբ՝ Համլետ Խաչատրյանի կողմից մեղքն ընդունելը, խոստովանական ցուցմունքներ տալը և կատարածի համար զղջալը՝ որպես նրա հետհանցավոր դրական վարքագիծ, վկայում է այն մասին, որ նա գիտակցել է իր արարքի հանրային վտանգավորությունն ու զղջացել է դրա համար: Միաժամանակ, որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող միակ հանգամանք է դիտարկվել հանցանքն ակոհողի ազդեցության տակ կատարելն ու Համլետ Խաչատրյանին մեղավոր է ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (սպանությունը՝ սպորինսարաք մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով) նախատեսված հանցանք կատարելու մեջ և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 8 տարի ժամկետով:

Հայաստան Օհանյան (1936-2020)

Հայաստան Օհանյանին սպանել է որդին²⁷

Գործի դատավարական նախապատմությունը

2020 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Մամիկոն Օհանյանը Հայաստան Օհանյանից տեղեկանալով նրա կողմից տարիներ առաջ օտար տղամարդու հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքի մասին՝ ձեռքի բաց ափով ու բռունցքներով հարվածներ է հասցրել անկողնում պառկած հաշմանդամություն ունեցող Հայաստան Օհանյանի դեմքին, որից հետո ձեռքերով փակել է բերանն ու սեղմել կոկորդը, ինչի հետևանքով Հայաստան Օհանյանը գլխուղեղի արյունազեղումներից և մեխանիկական շնչահեղձությունից մահացել է:

Քննությանը հետազոտված ապացույցները

Դատաբժշկական փորձաքննությանը հաստատվել է Հայաստան Օհանյանի ստացած վնասվածքների և մահվան ուղիղ պատճառահետևանքային կապը:

Գործի քննության ընթացքում Մամիկոն Օհանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2021 թվականի օգոստոսի 25-ին ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկից տեղեկություն է ստացվել այն մասին, որ Մամիկոն Օհանյանն օգոստոսի 11-ին ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկում մահացել է:

Դատարանի եզրահանգումը

27 Տե՛ս քրեական գործ № ԱՐԱԳ/0035/01/21:

Գատարանը վերլուծելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ որոշել է Մամիկոն Օհանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով *(սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով)* առաջադրված մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ ամբաստանյալի մահվան հիմքով:

Նաիրուհի Այվազյան (1990-2020)

Նաիրուհի Այվազյանին սպանել է ամուսինը²⁸

Գործի դատավարական նախապատմությունը

2020 թվականի հունվարի 22-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, Գևորգ Պետրոսյանը իրեն պատկանող առանձնատան հյուրասենյակում կնոջը՝ Նաիրուհի Այվազյանին, դիտողություն է արել ամուսնական անհավատարմության համար, ինչի շուրջ առաջացած վիճաբանության, այնուհետև քաշքշուկի ընթացքում վերցնելով վառարանի տակ ընկած հակի թելը՝ սեղմել է Նաիրուհի Այվազյանի պարանոցը, ինչի հետևանքով վերջինս մահացել է:

Քննությամբ հետազոտված ապացույցները

Գատաքննության ընթացքում ամբաստանյալ Գևորգ Պետրոսյանը առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել մասնակիորեն և նշել է, որ ամուսնությունից 2-3 ամիս հետո կնոջ հետ սկսել են խնդիրներ ծագել կենցաղային հարցերի շուրջ, ինչի կապակցությամբ ինքը *«միշտ փորձել է կարգի հրավիրել կնոջը»*, սակայն դրանից հետո կինը տանից հեռանում էր և գնում իր հայրական տուն:

²⁸ Տե՛ս քրեական գործ № ՏԴ/0147/01/20:

Գևորգ Պետրոսյանը նաև նշել է, որ նրանք ունեն 3 անչափահաս երեխա, մեծ երեխան 9 տարեկան է, միջնեկը՝ 5, փոքրը՝ 3 տարեկան, որոնք փաստացի գտնվում են իր խնամքի ներքո:

Գևորգ Պետրոսյանը նաև նշել է, որ 2019 թվականի դեկտեմբերից սկսած Նաիրուհին ասել է, որ ուզում է բաժանվել, իրեն չի սիրում, ուրիշ տղամարդու է սիրում և ցանկանում է երեխաների հետ միասին հեռանալ: Թեպետ համանման խոսակցություններ և վիճաբանություններ բազմիցս են եղել, սակայն ըստ ամբաստանյալի՝ նա փորձել է ամեն կերպ «համոզել» կնոջը «մոռանալ ամեն ինչ և շարունակել ապրել միասին»:

Անդրադառնալով սպանությանը՝ Գևորգ Պետրոսյանը նշել է, որ այդ օրը գնացել է տուն և տեսել է, որ Նաիրուհին խոսում է հեռախոսով: Հարցրել է, թե ում հետ է խոսում, Նաիրուհին նյարդայնացել է և պատասխանել է, որ խոսում է տղամարդու հետ, որից հետո ինքը «կրկին հանգիստ տոնով հարցրել է, թե ինչու է նորից խոսում»: Կինն ասել է, որ նրան է սիրում և «կրկին հիստերիկացած» սկսել է ձեռքերով հարվածել իրեն, այդ հարվածներից մեկը կպել է իր պարանոցի աջ կողմին: Այդ ընթացքում ինքը բռնել է նրա ձեռքերից, որ չխփի, ու այդպես միասին վայր են ընկել հատակին, իր աչքն ընկել է վատարանի տակ, որտեղ տուկի թել է եղել: Ըստ Գևորգ Պետրոսյանի՝ ինքը չգիտի, թե ինչ է կատարվել իր հետ, ձեռքը գցել է թելին և դրանով փաթաթել Նաիրուհու վրիճն ու դրանից հետո այլևս ոչինչ չի հիշում:

Չնայած նշվածին՝ գործով վկաներից մեկի ցուցմունքի համաձայն՝ Գևորգի հայտնածից ինքը կարծել է, որ Նաիրուհին ինքնասպան է եղել: Իր մեջ հարցեր են առաջացել, թե կարող է ինչ-որ հիվանդություն կամ անախորժություններ է ունեցել, սակայն Գևորգը բոլորը հերքել է և ասել, որ չգիտի, թե ինչն է եղել պատճառը: Այնուհետ նույն վկան հաջորդ օրը համացանցից է տեղեկացել, որ Նաիրուհուն սպանել է Գևորգը:

Գործով մեկ այլ վկայի ցուցմունքի համաձայն՝ հարցին, թե ինչու է սպանել Նաիրուհուն, Գևորգ Պետրոսյանն ասել է. «Ինքն է հասցրել»:

Իր հերթին Գևորգ Պետրոսյանը դատարանում հայտնել է, որ երբ տեսել է Նաիրուհուն մահացած, հասկացել է, որ ինքն է խեղդել, զղջացել է կատարածի համար, բայց արդեն ուշ է եղել: Ինքը կանխամտածված չի ցանկացել սպանել կնոջը, այլ կատարել է վեճի ընթացքում միմյանց քաշքշելու ընթացքում և ցանկացել է միայն վախեցնել կնոջը, որպեսզի չբաժանվի իրենից և չթողնի իր ընտանիքը:

Գործով նշանակված դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ՝ Գևորգ Պետրոսյանը մեղսունակ է և գիտակցել է իր կատարած արարքը:

Դատարանի եզրահանգումը

Վերլուծելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ դատարանը հաշվի է առել ոչ միայն կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, այլև Գևորգ Պետրոսյանի անձը բնութագրող տվյալները՝ *այն, որ երիտասարդ է, նախկինում դատապարտված կամ այլ կերպ արատավորված չի եղել, բնութագրվում է դրականորեն, զղջում է կատարածի համար*: Որպես ամբաստանյալի պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք՝ դատարանը հաշվի է առել կատարած հանցանքի համար զղջալը, խոստովանական ցուցմունքներ տալը, խնամքի տակ մինչև 14 տարեկան երեք երեխա ունենալու հանգամանքը, հանցանքի կատարումը տուժողի հակաբարոյական արարքով պայմանավորված լինելը:

Գործով ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք դատարանը չի հայտնաբերել:

Արդյունքում՝ Գևորգ Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (*սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտարկորոշյալ կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով*) և դատապարտվել 8 տարի ժամկետով ազատազրկման:

Գործով մեղադրող դատախազը բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ դատարան, և բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել և փոփոխվել է պատժի մասով՝ դատապարտելով Գևորգ Պետրոսյանին 9 տարի ժամկետով ազատազրկման:

Սիլվա Դավթյան (1954-2021)

Սիլվա Դավթյանին սպանել է որդին²⁹

Գործի դատավարական նախապատմությունը

2021 թվականի դեկտեմբերի 13-ին՝ ժամը 12:00-13:00-ն ընկած ժամանակահատվածում, Սիլվա Դավթյանի որդին՝ Գևորգ Գևորգյանը, իրենց բնակարանում, ապա նաև դրան կից օժանդակ շինության խորդանոցում, ձեռքի բաց ափով և բռունցքներով բազմաթիվ հարվածներ է հասցրել Սիլվա Դավթյանին գլխին և դեմքին՝ առաջացնելով գլխուղեղի ծանր աստիճանի սալջարդ և մարմնական վնասվածքներ, որոնց հետևանքով Սիլվա Դավթյանը մահացել է:

Քննությանը հետազոտված ապացույցները

Նախաքննությանը տված ցուցմունքներով՝ Գևորգ Գևորգյանն իրեն մեղավոր է ճանաչել և նշել է, որ 2021 թվականի դեկտեմբերի 13-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, ինքը դուրս է եկել տնից և գնացել պրոբացիոն ծառայություն՝

²⁹ Տե՛ս քրեական գործ № ՄԳ/0046/01/22:

հերթական անգամ վաղաժամկետ ազատման անչոյթյամբ ներկայանալու, որտեղից վերադարձել է տուն: Նստելով՝ չբացված շիշը դրել է սեղանին ու սկսել խմել: Այդ ամենը տեսնելով՝ մայրը դիտողություն է արել՝ ասելով, որ քիչ ակոճիկ օգտագործի: Դրանից իրենց միջև վիճաբանություն է առաջացել, որի ընթացքում նա *բարկացել է և բռունցքներով մի քանի անգամ հարվածել մոր գլխին ու դեմքին*: Միլվա Դավթյանը դուրս է եկել հյուրասենյակից ու գնացել նույն հարկում գտնվող խորդանոցի ուղղությամբ, իսկ Գևորգ Գևորգյանը խոհանոցից ջուր է վերցրել ու գնացել խորդանոց, որտեղ կրկին առաջացած *վիճաբանության ժամանակ բարկացել* ու սկսել է բռունցքներով հարվածներ հասցնել մոր գլխին այնքան ժամանակ, մինչև նա վայր է ընկել և սկսել չխոսել ու չշարժվել: Մորը փակել է խորդանոցում, գնացել տուն ու սկսել մտածել, թե ինչպես տուն վերադարձող հորից հնարավորինս թաքցնի իրականությունը. մոր հագուստները, իր օգտագործած օդու շշերը, արյունը մաքրելու համար օգտագործած սրբիչները և այլ պարագաներ լցրել է տոպրակների մեջ ու նետել աղբարկղը, իսկ իր հագին եղած հագուստները հանել է ու լցրել լոգարանում, որպեսզի հնարավոր հետքերը վերացնի:

Քիչ անց հայրը եկել է ու սկսել հարցուփորձ անել մոր գտնվելու վայրի մասին, որին տարբեր խուսափողական պատասխաններ է տվել: Հայրը փորձել է բացել խորդանոցի դուռը, սակայն չի կարողացել, ինչի համար իջել է ներքև՝ դուռը ջարդելու համար կացինը բերելու նպատակով: Այդ ժամանակ Գևորգը բացել է խորդանոցի դուռն ու մորը քաշելով տեղափոխել ու պատկեցրել է ննջասենյակի հատակին: Քիչ անց հայրը եկել է ու տեսնելով կնոջը ննջասենյակի հատակին պառկած վիճակում՝ զանգահարել է ոստիկանություն ու հայտնել կատարվածի մասին:

Թեպետ նախաքննության ընթացքում Գևորգ Գևորգյանն ընդունել է մեղքն ու բնակարանում մանրամասն նկարագրել հանցագործության կատարման օրը կատարված բոլոր գործողությունները, սակայն դատարանում իրեն մեղավոր չի

ճանաչել և հայտնել է, որ մորը չի հարվածել, չի ծեծել, միայն վիճել է, իսկ մոր հագուստը նետել է աղբամանը, իր շորերը մոր ասածով է լցրել բաղնիքի տարայի մեջ, քանի որ դրանց վրա սուրճ էր թափել:

Դատարժշկական փորձաքննություն

Դիակի դատարժշկական փորձաքննության եզրակացությամբ՝ Սիլվա Դավթյանի մահը վրա է հասել փակ, բուք գանգուղեղային վնասվածք ստանալու հետևանքով, որն էլ գտնվում է ուղղակի պատճառական կապի մեջ՝ մահվան անմիջական պատճառի հետ: Ստացված բազմաթիվ վնասվածքները պատճառվել են կենդանության օրոք՝ մահվանից շատ կարճ ժամանակահատված առաջ, բուք առարկաների երկուսից ավելի ներգործության հետևանքով, որոնք կենդանի անձանց մոտ համարվում են առողջությանը ծանր վնաս առաջացնող, կյանքին վտանգ սպառնացող, իսկ տվյալ դեպքում՝ բերել են մահվան: Սիլվա Դավթյանի մահը վրա է հասել վնասվածքները ստանալուց մոտ 1-3 ժամ հետո:

Դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ՝ Գևորգ Գևորգյանը հոգեկան հիվանդություն չի ունեցել և չունի. նրա մոտ հայտնաբերվում է *«հոգեկան (փսիխոպիկ) և վարքային խանգարում»* ակոհոլի գործածման հետևանքով, որը արտահայտված չէ և չի ուղեկցվում ախտաբանական ախտանիշներով: Ինչպես հանցագործությունը կատարելիս, այնպես էլ դատարժշկական փորձաքննության ժամանակ նա կարող էր գիտակցել իր գործողությունների բնույթը, վտանգավորությունը, հաշիվ տալ իրեն կատարած արարքների համար և ղեկավարել դրանք:

Հանցագործությունը կատարելիս *«փորձաքննվողը չի գտնվել նաև հոգեկան գործունեության որևէ ժամանակավոր հիվանդագին խանգարված վիճակում»*, որը կարող էր գրկել նրան գիտակցել իր գործողությունների վտանգավորությունն ու ղեկավարել դրանք, այլ գտնվել է ակոհոլ գործածած

վիճակում, ուստի նրան մեղսագրվող արարքի նկատմամբ Գևորգ Գևորգյանին հարկ է ճանաչել մեղսունակ:

Դատարանի եզրահանգումը

Վերլուծելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ դատարանը հանգել է այն հետևության, որ Գևորգ Շահենի Գևորգյանը մեղավոր է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ *(սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտարկողությամբ կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով)* և որպես պատիժ է նշանակել ազատազրկում 13 տարի 6 ամիս ժամկետով:

Վալենտինա Գևորգյան (հայտնի չէ -2021)

Վալենտինա Գևորգյանին սպանել է ամուսինը³⁰

Գործի դատավարական նախապատմությունը

2021 թվականի հունիսի 26-ին՝ ժամը 04:00-ի սահմաններում, գտնվելով տանը՝ Ֆեոդոր Գևորգյանը կնոջ՝ Վալենտինա Գևորգյանի հետ վերջինիս կողմից իրեն չկերակրելու հարցի շուրջ առաջացած վիճաբանության ընթացքում դիտավորությամբ ձեռքերով, ոտքերով և աթոռով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ: Ստացած մարմնական վնասվածքներով շտապ բուժօգնության ավտոմեքենայով Վալենտինա Գևորգյանը տեղափոխվել է Գյումրիի

30 Տե՛ս քրեական գործ № ՇԴ/0197/01/21:

բժշկական կենտրոն, որտեղ գիտակցության չգալով՝ 2021 թվականի հուլիսի 3-ին՝ ժամը 01:00-ին, մահացել է:

Քննությանը հետազոտված ապացույցները

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ՝ Վալենտինա Գևորգյանի մահը վրա է հասել ստացված մարմնական վնասվածքներից:

Գործի քննության ընթացքում դատարանը տեղեկություն է ստացել, որ Ֆեոդոր Գևորգյանը մահացել է, ինչի վերաբերյալ դատարանին է ներկայացվել ՔԿԱԳ տարածքային բաժնից տեղեկանք:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը վերլուծելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ որոշել է Ֆեոդոր Գևորգյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (*դիտարկությանը առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ անզոչությանը առաջացնելով փուժողի մահ՝ պատժվում է ազատազրկմամբ հինգից տասը տարի ժամկետով*) քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10)-րդ կետի, այն է՝ Ֆեոդոր Արտաշեսի Գևորգյանի մահվան հիմքով:

**ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԴԵՊՔԵՐ**

Օսան Սիմոնյանի (հայտնի չէ -2019)

Օսան Սիմոնյանին սպանել է որդին³¹

Գործի դատավարական նախապատմությունը

2019 թվականի մարտի 15-ին՝ ժամը 11:40-ի սահմաններում, Սարգիս Սիմոնյանը կացինով երկու անգամ հարվածել է Օսան Սիմոնյանի գլխի շրջանին, որի հետևանքով ստացած մարմնական վնասվածքներից Օսան Սիմոնյանը մահացել է:

Քննությամբ հետազոտված ապացույցները

Գործի քննության ընթացքում արձանագրվել է, որ Սարգիս Սիմոնյանը 2007 թվականից հաշվառված է եղել հոգեբուժարանում՝ «սաթենոդեպրեսիվ համախտանիշ» ախտորոշմամբ և ժամանակ առ ժամանակ ստացել է բուժում:

Նշանակված դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության համաձայն՝ նրա մոտ հայտնաբերվել է «շիզոֆրենիա հալյուցինատոր պարանոիդ ձև» քրոնիկական հոգեկան հիվանդությունը: Իրավախախտումը կատարելու պահին նա գտնվել է վերը նշված վիճակում, արարքը կատարել է «զտանցական ապրումների ներքո», որը զրկել է նրան գիտակցել իր գործողությունների վտանգավորությունը և ղեկավարել դրանք, ուստի նրան մեղսագրվող արարքի նկատմամբ Սարգիս Սիմոնյանին հարկ է ճանաչել անմեղսունակ:

Դատարանը որոշում է կայացրել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու մասին՝ նկատի ունենալով, որ Սարգիս Սիմոնյանը նախատեսված հանցավոր արարքը կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում:

Կայացած հաջորդ դատական նիստի ընթացքում դատախազը հայտնել է, որ Սարգիս Սիմոնյանը մահացել

31 Տե՛ս քրեական գործ № ՏԳ/0096/01/19:

է, ինչի վերաբերյալ դատարանին է ներկայացվել ՔԿԱԳ տարածքային բաժնից տեղեկանք:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը վերլուծելով դատաքննությանը հետազոտված ապացույցները՝ որոշեց Սարգիս Սիմոնյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (*սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտարկությանը կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով*) առաջադրված մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ ամբաստանյալի մահվան հիմքով:

Եղաբերո Ջաքարյան (հայտնի չէ -2019)

Եղաբերո Ջաքարյանին սպանել է որդին³²

Գործի դատավարական նախապատմությունը

2019 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 16:30-ի սահմաններում, Վանիկ Ջաքարյանը հոր հասցեին վիրավորական արտահայտություն հնչեցնելու համար տասից ավելի անգամ հարվածել է մոր դեմքին ու սպանել նրան: Այնուհետև հանել է իր հագին եղած անդրավարտիքի գոտին ու զցելով մոր պարանոցին, դին հյուրասենյակից քարշ է տվել դեպի ննջարան, որպեսզի թաքցնի, ինչից հետո փոխել է արյունոտված անդրավարտիքը, ապա խոհանոցի պահարանի մեջ պահել է դանակը, կողպել տան մուտքի դուռը, գնացել է խանութ, որտեղից ծխախոտ է գնել և, մտածելով, որ ոստիկանները կգան, մեկնել է Երևան: Դրանից հետո՝ ժամը 24:00-ի սահմաններում, Երևանից պատահական տաքսի մեքենայով վերադարձել է Գյումրի, որտեղ և իրեն հայտնաբերել են ոստիկանության աշխատակիցները:

32 Տե՛ս քրեական գործ № ՇԴ/0110/01/19:

Քննությանը հետազոտված ապացույցները

Գործի քննության ընթացքում պարզվել է, որ Վանիկ Զաքարյանը շուրջ 10 տարի ընդմիջումներով գտնվել է ստացիոնար բուժման մեջ՝ հոգեբուժարանում, որտեղ նրա մոտ ախտորոշվել է «*շիզոֆրենիա, պարկինսոն*» հիվանդություն, ինչի կապակցությամբ ստացել և օգտագործել է հոգեմետ դեղորայք:

Ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր եզրակացության համաձայն՝ Վանիկ Զաքարյանը հանցագործությունը կատարել է անմեղսունակության վիճակում:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը վերլուծելով դատաքննությանը հետազոտված ապացույցները՝ հանգել է այն հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (*սպանությունը՝ սպորինսարար մեկ ուրիշին դիտավորությանը կյանքից զրկելը՝ պարծվում է ազատագրկնամբ՝ ութից փասնհինգ փարի ժամկետով*) նախատեսված հանրորեն վտանգավոր արարքն անմեղսունակության վիճակում կատարած Վանիկ Զաքարյանին ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից ու նրա նկատմամբ կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հարկադիր բուժում հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում:

Անգին Քոչարյան (հայտնի չէ - 2020)

Անգին Քոչարյանին սպանել է որդին³³

Գործի դատավարական նախապատմությունը

2020 թվականի հուլիսի 17-ին Կամո Պապյանը մուրճով հարվածել է համատեղ բնակվող մոր՝ Անգին Քոչարյանի գլխին, այնուհետ սուր ծակող-կտրող գործիքով 11 հարված

33 Տե՛ս քրեական գործ № ԼԴ/0139/01/21:

հասցրել նրա կրծքավանդակի հատվածին՝ սպանելով Անգինին, ապա նույն բնակարանում կացնով, մանրասղոցով ու դանակներով մասնատել է դիակը, փաթեթավորել պոլիէթիլենային պարկերում և տեղափոխելով մոտակայքում տեղակայված աղբարկղերի մոտ՝ դիակի մասերը գցել է դրանց մեջ ու մասնակի այրել:

Քննությանը հետազոտված ապացույցները

Դատաբժշկական փորձաքննության ուսումնասիրությամբ հայտնաբերվել են՝ գլխի ճակատագագաթաքունքային շրջանի սալջարդ վերք, գանգի ոսկրերի բազմաբեկոր կոտրվածքներ, որոնք հասցվել են գլխի աջ ճակատագագաթաքունքային շրջանում սահմանափակ մակերես ունեցող բուր, կարծր առարկայի ուժգին և շեշտակի ներգործության հետևանքով, կենդանության օրոք, ունեն առողջության ծանր վնասի հատկանիշներ և մահվան անմիջական պատճառ են: Անգին Քոչինյանի դիակի մարմնամասերի ուսումնասիրությամբ հայտնաբերվել են նաև կրծքավանդակի հատվածում 11 ծակած-կտրած թափանցող վերքեր, որոնք պատճառվել են առնվազն 11 ուժգին և շեշտակի ներգործությունների հետևանքով, կենդանության օրոք, որոնք ինչպես առանձին-առանձին յուրաքանչյուրը, այնպես էլ միասին կենդանի անձանց մոտ ունեն առողջության ծանր վնասի հատկանիշներ, որպես կյանքին վտանգ սպառնացող և տվյալ դեպքում, կարող էին նպաստել մահվան վրա հասնելուն:

Ստացված ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Կամո Պապյանն ունեցել է և դատահոգեբուժական փորձաքննության ընթացքում ևս ունի *«մնացորդային շիզոֆրենիա»* ախտորոշմամբ հիվանդություն և արարքը կատարելիս, ինչպես նաև դատահոգեբուժական փորձաքննության ընթացքում *«հիվանդագին խանգարված վիճակում է»*, արարքը կատարել է *«գառանցական սայրումների ներքո»*, ինչը զրկել է նրան գիտակցել իր գործողությունների վտանգավորությունն ու ղեկավարել դրանք, ուստի իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Կամո

Պաայանին հարկ է ճանաչել անմեղսունակ:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը վերլուծելով դատաքննությանը հետազոտված ապացույցները՝ հանգել է այն հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (*սպանությունը՝ սպորինսարար մեկ ուրիշին դիտավորությանը կյանքից զրկելը՝ պարծվում է ազատագրկմամբ՝ ութից փասնհինգ փարի ժամկետով*) նախատեսված հանրորեն վտանգավոր արարքն անմեղսունակության վիճակում կատարած Կամո Պաայանին ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից ու նրա նկատմամբ կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հարկադիր բուժում հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում՝ ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում:

Լուսնթագ Մնացականյան (հայտնի չէ - 2020)

Լուսնթագ Մնացականյանին սպանել է որդին³⁴

Գործի դատավարական նախապատմությունը

2020 թվականի հոկտեմբերի 18-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Տիգրան Քարամյանն իր հայրական տան խոհանոցից վերցնելով դանակ՝ մոտեցել է հյուրասենյակում նստած Լուսնթագ Մնացականյանին և ձեռքին եղած դանակով 6 անգամ հարվածներ է հասցրել Լուսնթագ Մնացականյանի պարանոցի, անրակի շրջանին և սպանել նրան:

Քննությանը հետազոտված ապացույցները

Առաջադրված մեղադրանքում Տիգրան Քարամյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունքներ է տվել, որ այդ օրը, երբ մոր՝ Լուսնթագ Մնացականյանի հետ մնացել են մենակ,

34 Տե՛ս քրեական գործ № ԱվԴ/0018/01/21:

տան երկրորդ հարկից իջել է առաջին հարկ, խոհանոցից վերցրել է խոհանոցային դանակ, մոտեցել է հյուրասենյակում բազմոցին նստած մորը և աջ ձեռքով բռնած դանակով մի քանի անգամ հարվածներ է հասցրել մոր պարանոցին ու սպանել է նրան: Մորը սպանելու ժամանակ վնասել է նաև իր ձեռքը նույն դանակով: Այդ քայլին է գնացել, քանի որ ինքը «Հիսուսն» է, իսկ մայրը «սատանա» է եղել:

Դատահոգերուժական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Տիգրան Քարամյանն ունեցել է և դատահոգերուժական փորձաքննության ընթացքում ևս ունի *«մնացորդային շիզոֆրենիա»* ախտորոշմամբ հիվանդություն և արարքը կատարելիս, ինչպես նաև դատահոգերուժական փորձաքննության ընթացքում *«հիվանդագին խանգարված վիճակում է»*, արարքը կատարել է *«զառանցական սայրումների ներքո»*, ինչը գրկել է նրան գիտակցել իր գործողությունների վտանգավորությունն ու ղեկավարել դրանք, ուստի իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Տիգրան Քարամյանին հարկ է ճանաչել անմեղսունակ:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը վերլուծելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ հանգել է այն հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (*սպանությունը՝ սպորինարար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից գրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով*) նախատեսված հանրորեն վտանգավոր արարքն անմեղսունակության վիճակում կատարած Տիգրան Քարամյանին ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից ու նրա նկատմամբ կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հարկադիր բուժում հատուկ տիպի հոգերուժական բաժանմունքում՝ ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում:

**ԼՐԱՏՎԱՍԻՋՈՑՆԵՐՈՎ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ
ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԴԵՊՔԵՐ**

2018 թվական

Անանուն (1990 - 2018)

Օգոստոսի 30-ին՝ ժամը 17:35-ին, շտապօգնության 6-րդ ենթակայանից ոստիկանության Շենգավիթի բաժին հաղորդում է ստացվել, որ կանչով Արարատյան փողոցի բնակարաններից մեկում հայտնաբերվել է 28-ամյա կնոջ դի:

Դատաբժշկական զննությամբ պարզվել է, որ կնոջ մարմնի տարբեր մասերին կտրած-ծակած վերքեր կան: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների արդյունքում նույն օրը ոստիկանության ծառայողները հայտնաբերել և կասկածանքով բերման են ենթարկել Արևվյան քաղաքում ապրող 38-ամյա մի տղամարդու, որը նախաքննական մարմնի որոշմամբ ձերբակալվել է:

2019 թվական

Անանուն (1970 - 2019)

Ապրիլի 1-ին Երևան քաղաքի Գայի պողոտայում գտնվող շենքերից մեկի բնակարանի խոհանոցի բազմոցին հայտնաբերվել է նույն բնակարանի՝ 1970 թվականին ծնված կնոջ դին՝ կրծքավանդակի աջ կեսի կողմնային մակերեսին և աջ ազդրի վերին երրորդի առաջադրսային մակերեսին կտրած-ծակած վերքերով: Իրականացված անհետաձգելի քննչական և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ 1970 թվականին ծնված կնոջը կյանքի հետ անհամատեղելի վնասվածքներ պատճառել է որդին՝ ծնված 1994 թվականին: Վերջինս առերևույթ հանցագործություն կատարելու կասկածանքով ձերբակալվել է:

Անանուն (1989 - 2019)

Մայիսի 8-ի երեկոյան Արարատի մարզում դաշտամիջյան տարածքում 26-ամյա երիտասարդը ռետինե խողովակով, փայտյա մահակով և այլ առարկաներով ծեծի է ենթարկել իր

վաղեմի ծանոթ 30-ամյա կնոջը, որը ստացած մարմնական վնասվածքների հետևանքով մահացել է: Նախկինում նույն տղամարդը բազմիցս ծեծի է ենթարկել և մարմնական վնասվածքներ է հասցրել կնոջը, սակայն մնացել է անպատիժ:

Անանուն (1957 - 2019)

Մայիսի 24-ին՝ առավոտյան ժամը 6:00-ի սահմաններում, Շիրակի մարզի գյուղերից մեկում եղբայրը սպանել է հարազատ քրոջը՝ մարմնական վնասվածքներ հասցնելով նաև քրոջ որդուն, այնուհետև ինքնասպան եղել:

Անանուն (1982 - 2019)

Մայիսի 17-ին Արարատի մարզում 42-ամյա տղամարդը դանակահարել է նախկին կնոջը, որը «կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած վերք, ներքին արյունահոսություն» ախտորոշմամբ տեղափոխվել էր բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք: Մի քանի օր ուշքի չգալով՝ կինը մահացել է:

Էլեն Ս. (հայտնի չէ - 2019)

Հունիսի 25-ի վաղ առավոտյան՝ ժամը 5:30-ի սահմաններում, Երևանի Նորք-Մարաշ թաղամասում գտնվող կիսակառույց տանը Արսեն Ն.-ն վիճել է նույն տանը մանկահասակ երեխայի հետ օթևանած Էլեն Ս.-ի հետ: Վիճարանության ընթացքում Արսեն Ն.-ն դանակով, ապա ուրագով բազմաթիվ հարվածներ է հասցրել Էլեն Ս.-ի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ:

Շողակաթ Մարտիրոսովա (1925 - 2019)

Հուլիսի 18-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում, Արմավիրի բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվել ոստիկանության Արմավիրի բաժին, որ հիվանդանոցի շտապօգնության խումբը կանչով մեկնել է գյուղերից մեկում

գտնվող հանրակացարան, որտեղ սենյակներից մեկում հայտնաբերվել է կնոջ դի: Ոստիկաններն ու քննիչները նշված տանը հայտնաբերել են տանտիրուհու՝ 94-ամյա Շողակաթ Մարտիրոսովայի դին: Ըստ դատաբժշկի նախնական հայտնած տեղեկությունների՝ սպանված կնոջ մարմնի վրա եղել են բազմաթիվ սալջարդեր, կոտրվածքներ: Նա մահացել է բռնության հետևանքով: Սպանությունը կատարելու կասկածանքով Արմավիրի մարզի ոստիկանները տաք հետքերով հայտնաբերել են 74-ամյա Պետրոս Պողոսյանին:

Անժելա Ք. (1958 - 2019)

Հուլիսի 19-ին՝ ժամը 03:45-ի սահմաններում, ոստիկանության Էրեբունու բաժին ահազանգ է ստացվել, որ Նոր Արեշի փողոցի տներից մեկի մոտից շտապօգնության բրիգադները «Էրեբունի» հիվանդանոց են տեղափոխել քաղաքացու, որը ճանապարհին գիտակցության չգալով՝ մահացել է: Մահացածը նույն փողոցի 61-ամյա բնակիչ Անժելա Ք.-ն էր, որին դանակով մի քանի հարվածներ է հասցրել որդին:

2020 թվական

Սառա Կարապետյան (2004 - 2020)

Հունվարի 5-ին, Երևանի բնակարաններից մեկում, ժամը 23:00-ի սահմաններում, 1-03 շտապօգնության խումբն ահազանգել է ոստիկանություն և հայտնել, որ կանչով մեկնել են Սայաթ-Նովայի պողոտայի բնակարաններից մեկը, որտեղ ննջասենյակի անկողնում հայտնաբերել են 16-ամյա աղջկա դի: Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ երեխան մահացել էր խեղդամահ արվելու հետևանքով:

Սպանությունը կատարելու կասկածանքով ձերբակալվել է 1993 թվականին ծնված մի երիտասարդ: Վերջինս տվել է ինքնախոստովանական ցուցմունք:

Մարինե Խ. (1977 - 2020)

Մարինենին սպանել է զուգընկերը: Նրա մարմինը հայտնաբերվել է Գյումրիի իր տանը: Մարտի 5-ին՝ ժամը 15:40-ին, հիվանդանոցից ոստիկանություն հաղորդում է ստացվել, որ «տրավմատիկ շոկ, գանգոլեղային փակ վնասվածքով» բուժօգնության է տեղափոխվել 13-ամյա մի աղջիկ: Դեպքի վայր մեկնած օպերատիվ խմբի ծառայողները բնակարանում հայտնաբերել են աղջկա մոր՝ 43-ամյա Մարինե Խ.-ի դիակը՝ բռնության հետքերով:

Ձեռնարկված միջոցառումներով հայտնաբերվել և հանցագործություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել 28-ամյա մի տղամարդ:

Անանուն (1994 - 2020)

Օգոստոսի 17-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության կողմից Երևան քաղաքում հայտնաբերվել է 26-ամյա բնակչուհու դի՝ պարանոցի և դեմքի հատվածներում մարմնական վնասվածքներով և բռնության հետքերով:

Սպանության կասկածանքով ՀՀ ոստիկանությունը փնտրում է նրա 32-ամյա զուգընկերոջը:

Անանուն (1953 - 2020)

Օգոստոսի 1-ին, Մովսես Խորենացու փողոցում ծառայություն կատարելու ժամանակ, ոստիկանները նկատել են մի քաղաքացու, որի ձեռքին պոլիէթիլենային տոպրակ է եղել: Երբ պարզաբանումներ կատարելու համար մոտեցել են նշված քաղաքացուն, պարզվել է, որ պոլիէթիլենային տոպրակում գլխատված կնոջ գլուխ է: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է քաղաքացու ինքնությունը, որը Տավուշի մարզի բնակիչ է: Պարզվել է, որ 58-ամյա տղամարդը գլխատել է քրոջը՝ Երևան քաղաքի 67-ամյա բնակչուհուն՝ վերջինիս տանը:

Անանուն (1987 - 2020)

Դեկտեմբերի 25-ին՝ ժամը 21:00-ին, ոստիկանության Վաղարշապատի բաժին հիվանդանոցից հայտնել են, որ «ձախ կողային հատվածում հրազենային վնասվածքին նմանվող» և «ճակատային հատվածում քերծվածք» վնասվածքներով իրենց մոտ է տեղափոխվել Էջմիածին քաղաքի 33-ամյա մի բնակչուհու դին:

Դեկտեմբերի 26-ին՝ ժամը 01:00-ին, կնոջ դին հիվանդանոց տեղափոխած 34-ամյա տղամարդը հայտնաբերվել և սպանություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության Վաղարշապատի բաժին:

Անանուն (1936 - 2020)

Դեկտեմբերի 12-ին Արագածոտնի մարզի Կարին գյուղում հայտնաբերվել է 84-ամյա մահացած կնոջ դի: Դեպքի վայր մեկնած օպերատիվ-քննչական խմբեր, փորձաքրեագետն ու դատաբժիշկը արձանագրեցին, որ տարեց կնոջը սպանել են: Հարուցված քրեական գործի շրջանակներում փաստական տվյալներ ձեռք բերվեցին, որ թոշակառու կնոջը որդին ծեծել է, ապա խեղդել: 50-ամյա տղամարդը հայտնաբերվել ու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության Աշտարակի բաժին: Նա տվել է խոստովանական ցուցմունք ու ձերբակալվել:

Անանուն (1959 - 2020)

Հոկտեմբերի 18-ին իր տանը հայտնաբերվել է 61-ամյա կնոջ դի՝ կրծքավանդակի շրջանում կտրած-ծակած վերքերով: Ոստիկանության ձեռք բերած փաստական տվյալների հիման վրա կասկածանքով բերման է ենթարկվել կնոջ 41-ամյա որդին:

2021 թվական

Լուսյա Մկրտչյան (1939 - 2021)

Փետրվարի 8-ին՝ ժամը 18:55-ին, ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից

նասիկանության Շենգավիթի բաժին հաղորդում է ստացվել, որ Նորագավիթի 1-ին փողոցի տներից մեկում մահացած կին կա: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ անհայտ անձը սուր կտրող-ծակող առարկայով հարվածներ հասցնելով 1939 թվականին ծնված Լուսյա Մկրտչյանի պարանոցին՝ սպանել է նրան:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, սպանությունը կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել 44-ամյա տղամարդ:

Անանուն (1956 - 2021)

Ապրիլի 20-ին՝ ժամը 20:10-ին, շտապօգնության կայանից նասիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժին հաղորդում է ստացվել, որ կրծքավանդակի կտրած-ծակած վերքով բժշկական կենտրոն են տեղափոխել Գյումրիի Շիրակացու փողոցի բնակչուհի, 65-ամյա մի կնոջ: Բժիշկներին, սակայն, մնում էր միայն արձանագրել կնոջ մահը. վնասվածքն անհամատեղելի էր կյանքի հետ:

Քննչական միջոցառումներով պարզվել է, որ դեպքը կատարվել է Շիրակացու փողոցում. կինը վնասվածքը ստացել էր հարևանի տնակում: Ըստ նախնական տեղեկության՝ ամուսինը վերադարձել էր տուն, կնոջը չգտնելով՝ գնացել էր հարևանի տնակ, վիճել կնոջ հետ և դանակահարել նրան:

Ահազանգից կես ժամ անց 69-ամյա ամուսինը բերման է ենթարկվել Մուշի բաժին, խոստովանել արարքն ու ձերբակալվել:

Անանուն (1970 - 2021)

Հունիսի 12-ին «Արտաշատ» բժշկական կենտրոնից Արտաշատի Դուկասյան փողոց մեկնած շտապօգնության խումբը հայտնաբերել է կտրած-ծակած վերքերով 51-ամյա կնոջ դի:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների արդյունքում բերման է ենթարկվել 21-ամյա մի երիտասարդ:

Ասանուն (1987 - 2021)

Օգոստոսի 11-ին՝ ժամը 09:20-ին, ոստիկանության Շենգավիթի բաժին է ներկայացել Երևան քաղաքի 33-ամյա մի տղամարդ ու հայտնել, որ շենքի շքամուտքում դանակահարել է նախկին կնոջը: Մեկնած ոստիկանները տեղում հայտնաբերել են 34-ամյա կնոջ դին՝ կտրած-ծակած վնասվածքներով:

Ասանուն (1962 - 2021)

Օգոստոսի 13-ին «Արմավիր» բժշկական կենտրոնից ոստիկանության Արմավիրի բաժին հաղորդում էր ստացվել, որ երկու օր առաջ «ինսուլտ և թոքաբորբ» նախնական ախտորոշմամբ բուժօգնության ընդունված 59-ամյա կինը օգոստոսի 12-ին մահացել է, իսկ 24 ժամ անց դիակներձարանում նրա պարանոցին կապտուկ է հայտնաբերվել:

Դիակներձարան մեկնած իրավապահները դիակի զննությամբ պարանոցի շրջանում հայտնաբերեցին շագանակագույն քերծվածք: Նշանակվեց դատաբժշկական փորձաքննություն: Պարզվեց՝ 59-ամյա կնոջ մահվան պատճառը մեխանիկական շնչահեղձությունն է: Նրան խեղդել էին:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների արդյունքում բերման է ենթարկվել 23-ամյա երիտասարդը:

Եվգենիա Յասոյան (1932 - 2021)

Սեպտեմբերի 5-ին՝ ժամը 11:40-ին, շտապօգնության ենթակայանից ոստիկանության Նոր Նորքի բաժին հաղորդում է ստացվել, որ շտապօգնության խումբը կանչով մեկնել է Նելսոն Ստեփանյան փողոցի շենքերից մեկի մի բնակարան, որտեղ հայտնաբերել է 1932 թվականին ծնված կնոջ դիակ:

Նշված հասցե մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ ժամը 09:30-ին, մալուխներով ձեռքի մատները կապելով, կնոջն էլեկտրահարել է 83-ամյա ամուսինը: Նա, սպանություն կատարելու կասկածանքով, բերման է ենթարկվել ոստիկանության Նոր Նորքի բաժին:

Անանուն (1975 - 2021)

Հոկտեմբերի 31-ին՝ ժամը 13:50-ին, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնից Էրեբունու բաժին հաղորդում է ստացվել, որ Սուվորովի փողոցի տներից մեկում տղամարդը սպանել է կնոջը:

Նախնական տվյալներով՝ խանդի շարժառիթով 52-ամյա տղամարդը խեղդել էր 46-ամյա կնոջը:

Անանուն (1944 - 2021)

Դեկտեմբերի 13-ին՝ ժամը 18:50-ին, ոստիկանության Կապանի բաժնում ահազանգ էր ստացվել, որ Ստեփանյան փողոցի շենքերից մեկում սպանված մարդ կա:

Ահազանգով դեպքի վայր մեկնած օպերատիվ-քննչական խմբի ծառայողները հայտնաբերել են 77-ամյա տանտիրուհու դիակը՝ բռնության ակնհայտ հետքերով:

Ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ սպանությունը կատարել է կնոջ 42-ամյա որդին:

Անահիտ Իսկանդարյան (1958 - 2021)

Դեկտեմբերի 28-ին՝ ժամը 13:50-ին, շտապօգնության կայանից ոստիկանության Կոմայրիի բաժին հաղորդում է ստացվել, որ Գյումրիի Բագրատունյաց օղակում գտնվող խանութի մոտ մահացած մարդ կա: Մեկնած օպերատիվ-քննչական խմբերը հագուստի խանութ-սրահում հայտնաբերել են 63-ամյա Անահիտ Իսկանդարյանի դին՝ պարանոցի հատվածում կտրած վերքերով:

Պարզվել է, որ 63-ամյա կնոջը սպանել է Երևան քաղաքի 50-ամյա տղամարդ:

Կնասպանությունը՝ կնոջ սպանությունը նրա կին լինելու փաստով, կապակցված է հայրիշխանական համակարգի կողմից կնոջ և աղջիկների կյանքը չարժևորելու հետ, որն էլ իր հերթին հանգեցնում է կանանց և աղջիկների սպանությունների դյուրինությանը՝ պայմանավորված կնատյացության խոր արմատներով:

Կնասպանության մասին խոսելիս առանցքային է դիտարկել ոչ միայն առանձին դեպքերը, այլև՝ նման սպանությունները խրախուսող ու բռնությունը հավերժացնող շարունակական համակարգը: Կնասպանության դեպքերի նկատմամբ հստակ կառուցակարգերի բացակայությունն ու բռնություն գործադրած անձի նկատմամբ մեղմ վերաբերմունքը նպաստում են այդ բռնությունների շարունակականությանն ու անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը:

Այս իմաստով կարևոր է քննարկել հետազոտության շրջանակներում վեր հանված դատական պրակտիկայի խնդիրները՝ հստակ կառուցակարգերի բացակայության և բռնություն գործադրած անձի նկատմամբ մեղմ վերաբերմունքի տեսանկյունից:

Հետազոտության շրջանակներում կնասպանության դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կնասպանության գործեր քննելիս դատարանները, որպես կանոն, հաշվի չեն առնում՝

- *հանցագործության նախապայմանությունը,*
- *ամբաստանյալի գործած հանցագործության շարժառիթը,*

— *հասարակության համար վրանգավորության
աստիճանը:*

Դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կնասպանության գործերի մեծ մասով դատարանները *պարասիանսարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանք դարարձնությանը առհասարակ չեն հայտնաբերել*, ինչպես, օրինակ՝ Մարինե Բեգյանի, Լուսիկ Մնացականյանի և Նաիրուհի Այվազյանի գործերում: Դատական ակտերի ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ անգամ ակնհայտ բռնության գործադրման փաստը նկարագրելիս համապատասխան *արարքը չի որակվել որպես կնոջ նկատմամբ բռնության գործադրում*, փոխարենը՝ դատական ակտում համապատասխան բռնարարքը նկարագրվել է՝ օգտագործելով առավել մեղմ՝ «վիճաբանություն», «քաշքշուկ» բառերը, ինչը կարող ենք տեսնել, օրինակ՝ Նաիրուհի Այվազյանի, Մարինե Բեգյանի գործերում՝ նրանց նկատմամբ բռնության տեսարանները նկարագրելիս:

Առավել մեղմ, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ «արդարացնող» պարզաբանումների հանդիպում ենք նաև այլ գործերով: Ինչպես, օրինակ՝ Լուսինե Խաչատրյանի նկատմամբ բռնության գործադրումը իբրև թե հիմնավորվում է այն հանգամանքով, որ նա «*ազդել է*» բռնարարի «*նյարդերի վրա*»:

Զեկույցի շրջանակներում ուսումնասիրված դատական ակտերը նաև փաստում են, որ կնասպանության գործեր քննելիս դատարանները որևէ կերպ չեն քննարկել գործով տուժողների նկատմամբ բռնության պարբերական լինելու հանգամանքը, մինչդեռ ներկայացված գործերով որպես վկա ներգրավված անձինք (տես, օրինակ՝ Մարինե Բեգյանի, Լուսիկ Մնացականյանի, Նաիրուհի Այվազյանի դատական գործերը) մեծ մասամբ նշում են բռնարարի՝ բռնություն գործադրելու շարունակականության մասին:

Կնասպանության երևույթը դիտարկելիս կարևոր է անդրադառնալ նաև ինքնասպանության այն դեպքերին, որոնք պայմանավորված են եղել կնոջ՝ դեպքին նախորդած տառապանքների և խոշտանգումների հետևանքով առաջացած հուզական վիճակով³⁵: Այս տեսանկյունից կարևոր է հասկանալ, թե գենդերային հիմնախնդիրները, արմատացած կարծրատիպերը և խտրականությունը ինչպիսի ազդեցություն են ունեցել կնոջ՝ ինքնասպանություն գործելու որոշումը կայացնելու վրա:

Լուսիկ Մնացականյանի դատական գործում բազմիցս նշվում է նրա նկատմամբ շարունակական բռնության գործադրման, տուժողին ծաղրուծանակի ու տանջանքների ենթարկելու մասին, ինչը կարող էր դիտարկվել որպես ծանրացնող հանգամանք պատասխանատվության և պատժի հարցը որոշելիս: Մինչդեռ նշված գործով դատարանը ոչ միայն *պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող որևէ հանգամանք չի հայտնաբերել, այլև համաներումով ազատ է արձակել* Տիգրան Նիկոլյանին:

Ընտանեկան բռնության գործադրման պարբերականության անտեսման, ինչպես նաև պետության կողմից կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունից և չարաշահումից պաշտպանելու պարտավորության իրականացման ձախողման ակնհայտ օրինակներից է նաև Քրիստինե Իսկանդարյանի գործը, երբ համակարգի անգործությունն Իլլարիոն Նունուշյանի համար ստեղծել էր անպատժելիության մթնոլորտ՝ նպաստելով նրա հանցագործության կատարմանը:

Կատարված բռնությունների բնութագրման թերությունները փաստում են նաև այդ հանցագործությունների որակման թերությունների մասին: Քննարկված գործերով ակնհայտ

35 Stü Psytel. 2010. Estimation de la mortalité liée aux violences conjugales en Europe: 'IPV EU Mortality.' DAPHNE Projet No. JLS/2007/DAP-1/140. Rapport scientifique. էջ 9-10, հասանելի է <http://www.psytel.eu/violences.php> հղումով:

բոնության դեպքերը քննարկելիս *դատարաններն առհասարակ չեն անդրադարձել հանցագործությունն առանձին դատանությանը կարարելուն կամ բոնության ենթարկված անձին տանջանքների ենթարկելու հանգամանքին* և պատճառված տառապանքը չեն որակել որպես *ծանրացնող հանգամանք* պատասխանատվության և պատժի հարցերը որոշելիս: Փոխարենը՝ բոնության և կնասպանության դեպքերը նկարագրելիս դատարանները սահմանափակվել են առավել մեղմ բնորոշումներով, իսկ որոշ դեպքերում էլ *«հայրնաբերվել» են պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքներ:*

Ակնհայտ ընտանեկան բոնության տարրեր պարունակող կնասպանության գործերով դատարանները որպես պատասխանատվությունն ու *պարիժը մեղմացնող հանգամանք* են դիտարկել, օրինակ՝ *մեղքի մասնակի խոստովանումը, նախկինում ոչնչով արարավորված չլինելը, բռնարարի դրական բնութագիրը* (տես Մարինե Բեգյանի գործով դատական ակտը) կամ *բռնարարի հետհանցավոր դրական վարքագիծը, որը դրսևորվել է խոստովանական ցուցմունքներ տալու, մեղքն ընդունելու և կարարածի համար զղջալու համակցությամբ* (տես Լուսինե Խաչատրյանի գործով դատական ակտը):

Անհրաժեշտ է միաժամանակ ընդգծել, որ գենդերային բոնության դեպքերին արդյունավետ արձագանքելու գործընթացում խնդրահարույց է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7)-րդ կետով նախատեսված՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքը, այն է՝ տուժողի վարքագծի հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը:

Հարկ է նկատել, որ Նաիրուհի Այվազյանի սպանության դեպքով դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, որպես *պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող*

հանգամանք է դիտարկել հանցագործության կատարումը՝ պայմանավորված տուժողի հակաքարոզական արարքով:

Գենդերային բռնության գործերով նման մեղմացնող հանգամանք նախատեսելն ուղղակի հակասություն է առաջացնում ոլորտը կարգավորող միջազգային իրավական ակտերի հետ, ինչպես, օրինակ՝ Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան (Կոնվենցիա)³⁶, որը Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2018 թվականի հունվարի 18-ին³⁷:

Կոնվենցիայի 42-րդ հոդվածով նախատեսվում է հստակ արգելք կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության, պատմականորեն օգտագործված արդարացումների վերաբերյալ: Կոնվենցիայով սահմանվում է, *որ պեղությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ ապահովելու, որ մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ, այսպես կոչված, «պատրիվը» չդիտվեն որպես Կոնվենցիայում նշված որևէ հանցագործության արդարացում:*

Ասվածից հետևում է, որ պետությունները պարտավոր են ապահովել, որ մեղադրյալի՝ իր արարքն արդարացնող որևէ հիմնավորում առ այն, որ գործողությունը կատարվել է կանխելու կամ պատժելու տուժողի՝ մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդական նորմերի, կամ պատշաճ վարքագծի, սովորույթների ենթադրվող, ընկալվող կամ փաստացի խախտումները, չդիտվի որպես քրեորեն պատժելի արարքի արդարացում:

Անհրաժեշտ է նկատել, որ նման իրավանորմի առկայությունն

36 Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680462533>

37 Տե՛ս <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210/signatures>

ատավել խնդրահարույց է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կինը հայկական հայրիշխանական համակարգում դիտվում է իբրև սեփականություն արական իշխանության դրսևորման ու հաստատման: Կնոջ ստորադաս լինելու համոզմունքի գերակայությունը թույլատրելի է դարձնում համանման հանցագործությունների կատարումն ու արդարացումներ փնտրում՝ դրանք որակելով իբրև կնոջ վարքի հակաբարոյականությամբ պայմանավորված գործողություններ:

Հարկ է անդրադառնալ նաև որոշ դեպքերում պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող մեկ այլ հանգամանքի, երբ դիտարկվում է ամբաստանյալի խնամքին մինչև 14 տարեկան երեխաների (տե՛ս Նաիրուհի Այվազյանի գործով դատական ակտը) առկայությունն այն պարագայում, երբ նույն գործերով տուժողը փաստացի ընտանեկան բռնության է ենթարկվել այդ նույն անչափահաս երեխաների ներկայությամբ:

Դատական պրակտիկայի նման տրամաբանությունն ուղղակի հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած այն դիրքորոշմանը³⁸, որ «...*որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է որջանրորեն նվազեցրած լինեն անձի կամ նրա կատարած արարքի հանրային վրանգավորությունը*», մինչդեռ կնասպանության դեպքերը որևէ կերպ չեն կարող համարվել որպես արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող հանգամանք, և, հետևաբար, նման տարրեր պարունակող գործերի քննության ընթացքում դատարանները չպետք է վերոշարադրյալ հիմքերը դիտարկեն որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ:

38 Տե՛ս մանրամասն ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի Պարույր Բայրամյանի վերաբերյալ № ՎԲ-84/07 գործով որոշումը, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=37131>

Վերոշարադրյալ կարգավորումներն ու պրակտիկան ուղղակի հակասության մեջ են նաև Կոնվենցիայի հետ, որի 46-րդ հոդվածով պետություններին կոչ է արվում ապահովել, որ Կոնվենցիայի կարգավորման առարկա հանցագործությունների մասով դատավճիռ կայացնելիս հաշվի առնվեն որոշակի ծանրացնող հանգամանքներ.

- ա) հանցագործությունը կատարվել է նախկին կամ ներկա ամուսնու/կնոջ կամ զուգընկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով, ընդհանրի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը չարաշահած անձի կողմից,*
- բ) հանցագործությունը կամ համասեռ հանցագործությունները կատարվել են շարունակաբար,*
- գ) հանցագործությունը կատարվել է որոշակի հանգամանքների բերումով խոցելի վիճակի մեջ հայրնված անձի նկատմամբ,*
- դ) հանցագործությունը կատարվել է երեխայի նկատմամբ կամ երեխայի ներկայությամբ,*
- ե) հանցագործությունը կատարվել է միասնաբար գործող երկու կամ ավելի անձանց կողմից,*
- զ) հանցագործությունը հետևել է ծայրահեղ բռնության գործադրմանը կամ զուգորդվել նման բռնություն գործադրելով,*
- է) հանցագործությունը կատարվել է զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով,*
- ը) հանցագործությամբ տուժողին պատճառվել է ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնաս,*

թ) կարարողը նախկինում դարապարտվել է նմանատիպ բնույթի հանցագործություններ կատարելու համար:

Քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների կարգավորումները Կոնվենցիայի կարգավորումների համատեքստում՝ կարող ենք փաստել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածը, որը նախատեսում է պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ, որպես այդպիսիք չի նախատեսում.

- հանցագործությունը կամ համասեռ հանցագործությունները կատարվել են շարունակաբար,*
- կնոջ կամ ամուսնու, զուգընկերների, ընտանիքի այլ անդամների կամ համարեղ բնակվողների նկատմամբ կատարված հանցագործությունները,*
- երեխայի ներկայությամբ կատարված հանցագործությունները (Կոնվենցիայի 46-րդ (դ) հոդված),*
- հանցագործությամբ փուժողին պարճատվել է ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնաս,*
- զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով կատարված հանցագործությունները:*

ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մյուս բոլոր ծանրացնող հանգամանքները համապատասխանում են Կոնվենցիայի պահանջներին:

Իրավաբանական գրականության մեջ անդրադառնալով ընտանեկան բնության գործերով ծանրացնող հանգամանքների ամրագրման անհրաժեշտությանը՝

հաճախ է նշվում, որ դա կարելի է հիմնավորել նաև այն հանգամանքով, որ «նույն հանցագործությունը ընտանիքի անդամ կամ զուգընկեր չհանդիսացող այլ անձանց կողմից կատարելը տուժողին ավելի քիչ տատապանք է պատճառում»³⁹:

ՀՀ քրեական օրենսգիրքը չի ներառում հատուկ դրույթներ կանանց նկատմամբ բռնությունների վերաբերյալ: Ավելին, օրենսգրքով մարդու իրավունքների խախտման այս ձևի՝ անձի սեռով պայմանավորված բնույթը կամ հատուկ դինամիկան հաշվի առնելու որևէ կոնկրետ մեխանիզմ առկա չէ: Օրենսգրքով կանանց նկատմամբ բռնությունը, կնասպանությունը որևէ կերպ սահմանված չեն, և նախատեսված չեն նաև տուժողի սեռը կամ տուժողի և հանցագործություն կատարած անձի միջև հարաբերությունները հաշվի առնող դրույթներ:

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, բռնությունից տուժածների պաշտպանության և հանցագործություն կատարած անձանց նկատմամբ քրեական հետապնդման համար արդյունավետ օրենսդրական կառուցակարգերի ապահովման նպատակով անհրաժեշտ է քրեական օրենսդրությամբ համապարփակ կարգավորումներ նախատեսել անձի՝ սեռի հիմքով բռնության բոլոր ձևերին՝ հատուկ ուշադրություն դարձնելով գենդերային բռնության դեպքերին:

39 Տե՛ս Հեգեմանն-Ուայթ, Եվրոպայի խորհրդի՝ անդամ պետություններին ուղղված «Կանանց նկատմամբ բռնության պաշտպանության մասին» № (2002)5 հանձնարարականի իրականացման 4-րդ փուլի մշտադիտարկման արդյունքների վերլուծական ուսումնասիրություն, Եվրոպայի խորհուրդ, 2004:

Քաղաքականության մշակման առաջարկներ

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, գենդերային բռնությունն ու կնասպանությունը կանխարգելելու և անպատժելիության մթնոլորտը վերացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը պետք է ընդունի անհրաժեշտ, արդյունավետ օրենսդրական կառուցակարգեր և ապահովի դրանց պատշաճ իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունը պետք է վավերացնի Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան և համապատասխանեցնի գործող օրենսդրությունը Կոնվենցիայի պահանջներին:

Մինչ Կոնվենցիայի վավերացումն անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում: Մասնավորապես՝

- 1) ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների շարքում անհրաժեշտ է լրացնել.
 - 1.1. *ընտանեկան բռնության գործադրումը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,*
 - 1.2. *անձի սեռի հիմքով բռնության բոլոր ձևերի իրականացումը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,*

- 1.3. ամուսնու, զուգընկերոջ, ընտանիքի այլ անդամի կամ համարեղ բնակվող անձի նկատմամբ կատարված հանցագործությունները՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,
- 1.4. հանցագործությունը կամ համասեռ հանցագործությունների շարունակաբար կատարումը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,
- 1.5. հանցագործությամբ տուժողին ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնասի պատճառումը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,
- 1.6. երեխայի ներկայությամբ կատարված հանցագործությունները՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,
- 1.7. զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով կատարված հանցագործությունները՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք:
- 2) Գենդերային բռնության գործերով բացառել ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7)-րդ կետով նախատեսված կարգավորումը՝ տուժողի վարքագծի հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք:
- 3) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել լրացում՝ սահմանափակելով համաներման կիրառման հնարավորությունը գենդերային բռնության դեպքերով:

Օրենսդրության փոփոխություններից գատ անհրաժեշտ է.

- 1) Պարբերաբար և պարտադիր կազմակերպել համապատասխան մասնագետների (դատավորներ, դատախազներ, քննիչներ և այլն) համար դասընթացներ՝ կնասպանության, գենդերային բռնության կապակցությամբ առկա միջազգային չափանիշների վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ առկա կարծրատիպերի վերացմանն ու բացառել կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ կարծրատիպեր ունեցող ցանկացած մասնագետի առկայությունն իրավապահ համակարգում:
- 2) Պարբերաբար մշակել և իրականացնել ծրագրեր՝ ուղղված գենդերային բռնության կանխարգելմանն ու հասարակության իրազեկվածության բարձրացմանը:

Քանակական հետապոտության արդյունքում բացահայտված սովյալներ

ԿԼԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	
ԿՏՐՈՂ-ԾԱԿՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ (այդ թվում՝ դանակ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ	13
ԾԵԾ (այդ թվում՝ բույժ առարկաների գործադրմամբ)	10
ԽԵՂԴԱՄԱՀ ԱՆԵԼ	7
ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԶՈՒԳՈՐԴՎԱԾ ԳԼԽԱՏՄԱՄԲ	2
ԿԱՑՆԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ	1
ՀՐԱՋԵՆԱՅԻՆ ԿՐԱԿՈՑ	1
ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑՆԵԼ	1
ԷԼԵԿՏՐԱՀԱՐՈՒՄ	1

ԲՈՆԱՐԱՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ	
Որդի	11
Ծանոթ	10
Ամուսին	9
Զուգընկեր/Փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձ	3
Եղբայր	2
Հայր	1

**ԿԼԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ**



ԵՐԵՎԱՆ՝	11
ԱՐԱԳԱԾՈՏՆ՝	2
ՇԻՐԱԿ՝	6
ՍՅՈՒՆԻՔ՝	2
ԱՐԱՐԱՏ՝	5
ԼՈՌԻ՝	1
ՏԱՎՈՒՇ՝	4
ՎԱՅՈՑ ՁՈՐ՝	1
ԱՐՄԱՎԻՐ՝	3
ԱՆՀԱՅՏ՝	1

**ՈՐՏԵՂ ԵՆ ՍՊԱՆԵԼ
ԿԱՆԱՅ**

ՏԱՆԸ	30
ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ	6

**ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Անհայտ	24
Կարճված քրեական գործեր՝ ամբաստանյալի մահվան հիմքով	3
Հարկադիր բուժում	3
Ազատազրկում 8 տարի ժամկետով	3
Ազատազրկում 8-ից ավելի տարի ժամկետով	2
Համաներում	1

Գրականության ցանկ

Հոդվածներ, զեկույցներ, հետազոտություններ

1. Հովհաննիսյան Ա., Չանդիրյան Ս., «Լոռեցված ձայներ».
Կնասպանությունը Հայաստանում 2016-2017
2. Ըմբռնել ու լուծել կանանց նկատմամբ բռնության
խնդիրը, ԱՀԿ, 2012:
“Understanding and addressing violence against women”,
WHO, 2012.
3. Կանանց նկատմամբ բռնություն, հիմնական փաստեր,
ԱՀԿ, 2017:
Violence against women. Key facts, WHO, 2017.
4. Կապուտի Ջ., Ռասել Դ., Կնասպանություն. խոսելով
անխոսելիս, 1990;1(2):
Caputi J, Russell DEH. “Femicide: speaking the
unspeakable”. Ms. 1990;1(2)
5. Կնասպանության ընկալման ամրապնդում: Կիրառելով
հետազոտությունը խթանելու գործողությունները և
հաշվետվողականությունը:
Strengthening understanding of femicide. Using research to
galvanize action and accountability. Washington DC, 2008.
6. Կնասպանության տեսություններն ու
դրանց նշանակությունը հասարակական
հետազոտություններում, 2016:
“Theories of femicide and their significance for social
research”, SAGE, 2016.
7. Կնասպանություն. գլոբալ խնդիր, որ գործել
է պահանջում, 2013, ՄԱԿ-ի համակարգերի

ակադեմիական խորհուրդ (ACUNS) Վիեննայի
գրասենյակ:

“Femicide. A Global issue that demands action” ACUNS.

8. Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել, Կնասպանություն.
կանանց սպանությունների քաղաքականությունը,
«Մակմիլան» հրատ., 1992:
Jill Radford and Diana E. H. Russell, “Femicide: The Politics
of Woman Killing”, 1992, Macmillan Publishing company.
9. Ռասել Դ. Ե. Հ., ՁԻԱՀ-ը որպես զանգվածային
կնասպանություն. Հարավային Աֆրիկան՝ կիզակետում,
Կնասպանությունը գլոբալ հեռանկարում, Նյու Յորք,
Teacher’s College Press; 2001:
Russell DEH. AIDS as mass femicide: focus on South Africa.
In: Russell DEH, Harmes RA, eds. Femicide in Global
Perspective, 2001.
10. Ռասել Դ. Ե. Հ., Հարմս Ռ. Ա. (խմբ.) Կնասպանությունը
գլոբալ հեռանկարում, Նյու Յորք, Teachers College Press;
2001:
Russell D.E.H., Harmes R.A., eds. “Femicide in Global
Perspective”. New York, Teachers College Press, 2001.
11. Psytel. 2010. “Estimation de la Mortalité liée aux Violences
Conjugales en Europe”: ‘IPV EU Mortality.’ DAPHNE Projet
No. JLS/2007/DAP-1/140. Rapport scientifique.
12. Սպանությունների գլոբալ մատյան, UNODC, 2013: Global
homicide book, UNODC.
13. Օսիպով Վ., Սարգիզովա Ջ., Տղամարդիկ և
գենդերային հավասարության հիմնախնդիրները
Հայաստանում, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2016:

Իրավական փաստաթղթեր

1. Կանանց և աղջիկների գենդերային հիմքով սպանությունների դեմ գործողությունների իրականացման մասին բանաձև, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 2014:
Resolution on Taking action against gender-related killing of women and girls, UN General Assembly, 2014.
2. ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6)
3. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա
Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Օփուզն ընդդեմ Թուրքիայի» դատական գործ
4. European Court of Human Rights, Case of Opuz v Turkey. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի» դատական գործ
European Court of Human Rights, Case of Kontrova v Slovakia.
5. Կնասպանության մասին Վիեննայի հռչակագիր Vienna Declaration on Femicide.
6. ՀՀ Սահմանադրություն
7. ՀՀ քրեական օրենսգիրք
8. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
9. ՀՀ վճռաբեկ դատարանի Պարույր Բայրամյանի վերաբերյալ № ՎԲ-84/07 գործով որոշում

